

3180

616.5
S-38

2010

12.002

6169

S - 38

XIX

(178)

ԳԱՐԱԿԻ Զ

ՀԻՄՆԴՈՒԹԻՒՆԵՐ

(ԾԱՂԻԿ, ԿՈՐՄԲՈՒԿ, ՍԿԱՐԼԱՏԻՆ, ԲՇԱԽՈՐ ՏԵՖ, ԱՆԴՐԱ-
ԴԱՐՁ ՏԵՆԴ, ԳԻՖՏԵՐԻՏ, ԸՆԴՀԱՏ ՏԵՆԴ, ԽՈԼԵՐՈՅ, ԳԵ-
ՂԻՆ ՏԵՆԴ, ՈՐՈՎՈՅՆԱՏԻՖ ԵԻ ԺԱՆՏԱԽՏ:)

ԱՊԱ ՅԵՏԿՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՖԵԳՄԵՆ ԵԻ ՏԱՐԵԴՄԵՆ
ԵՎԵՆԵԿՆԵՐՆ

Ե

ՆԱԽԱՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ՀԱԽԱՔԵՑ

ԲԺԻՆ Գ. ՏԵՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻց

Ի ՎԵԴՐԵՎՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԵՈՅ ԿԱԹՈՒՎԻԿԵ ԷՇՄԻԱԾՆԻ:

1880—ՌՅԻԹ.

610
189-55

6/6.9
5-38

ՎԱՐԱԿԻՉ

ՀԻՒՆԴՈՒԹԻՒՆԵՐ

(ԽԱՂԻԿ, ԿԱՐՄՐՈՒԿ, ՍԿԱՐԼԱՏԻՆ, ԲՇԱԽՈՐ ՏԻՖ, ԱՆԴՐԱ-
ԴԱՐՁ ՏԵՆԴ, ԴԻՖՏԵՐԻՏ, ԸՆԴՀԱՏ ՏԵՆԴ, ԽՈԼԵՐԱՑ, ԳԵ-
ԴԻՆ ՏԵՆԴ, ՈՐՈՎԱՑՆԱՏԻՖ ԵՒ ԺԱՆՏԱԽՏ:)

ՍԱՅԱ ՅԵԶԿՈՒԹԻՒՆՆԵՐՆ, ՖԵՇՐԱՆ ԵՒ ՏԱՐԱՄՄԱՆ-

ԵՂԱՆԱԿՆԵՐՆ
••• ՏԵՇ-ԲԿ-ՊՎ-Ջ-Դ •••

ՆԱԽԱՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐ

1003
1D380

ՀԱՄԱԳԵՐ

7/11 1922



Բժիշկ գ. Տէր Գրիգորեանց:]



Ի ՎԱՂԱՐՃԱՎԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷջՄԻԱԾՆԻ:

1880—Ռ Յ Ի Թ.

16545

०१८
४२-९४

କବିତାମ୍ବଳ

ՀՐԱՄԱՆ

S. S. ԳԵՐՐԴԱՅ Դ.

ՎԵՀԱՓՈՐ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈԼԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

u g f

Այս աշխատութիւնը քաղուած՝ եւ տեղ տեղ թարգմանուած է զանազան հեղինակների, եւ գլխաւորապէս Դօկտօր Էրիսմանի գրուածներից:

Վերջին ժամանակներում՝ վարակիչ հիւանդութիւնների համաճարակման քանի մի տեսակներն, յաճախ երեւալու պատճառով օգտակար համարեցի հաւաքել որքան ժամանակս ներեց, այդ հիւանդութիւնների վերայ ունեցած այժմեան տեղեկութիւնները, եւ ի լոյս ընծայել Արարատ ամսագրում. որից այժմ արտատպուեցաւ սոյն գրքոյկը սակաւաթիւ օրինակներով (480):

Սիֆելիսը՝ որին միայն իբրեւ զուտ միազմատիկական հիւանդութիւն յիշած եմ, պատրաստում եմ առանձին հրատարակել միւս Աստղիկան հիւանդութիւնների հետ միասին:

Գրքոյկիս առանձին մասերն յարմարացրած էին իբրեւ առանձին յօդուածներ Արարատի իւրաքանչիւր տեարի համար. այդ պատճառով բովանդակութիւնը տեղ տեղ սղմուած է. յոյս ունինք որ երկրորդ տպագրութեան մէջ կընդարձակուին, քանի մի թերութիւնները կուղղուին, կուղղուին նմանապէս քանի մի սպրդած սխալներն, որոնք եղան տպագրութեան միջոցին ուղղագրութեան ուշադրութիւն դարձնելու համար ազատ ժամեր չունենալու պատճառով :

Բժիշկ Գրիգոր Տ. Միքոյան Տէր Գրիգորէանց

2 ၃၁၈၂၄၃၆ 1880 ၁၇:

Ի ՎԱՂԱՐՃԱՊԱՏ:

I	Ներածութիւն վարակիչ հիւանդութիւնների	4
II	Մի հատուած համաճարակ հիւանդութիւնների պատմութիւնից	2
III	Վարակիչ Թոյների էութիւնը	6
IV	Վարակիչ հիւանդութիւնների բաժանումը	7

ՎԱՐՈԿԻՉ ԿՊՉՈՂԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ:

V	Ծաղիկ.	9
VI	Ծաղկահատութիւն	10
VII	Կարմրուկ (Կօրի)	17
VIII	Ակարլատին (Տքարլատին)	18
IX	Կարմիր քամի (Ռոշա)	20
X	Բծաւոր տիֆ (Ծաղոյ տիֆ)	20
XI	Դիֆտերիտ	22

ՎԱՐՈԿԻՉ ՄԻԱԶՄԱՑԻԿԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Քննիառ տենդ (պերեմեյախցայ լիքորած), Արովայնատիփ (աղլիքների տիփ, վարցաւ, երաշոյ տիֆ), Դիղին տենդ (յշլտայ գորյակա), Խօլերալ (քանտալստ (չումա));

XII	Գետինը իբրեւ վարակիչ միազմատիկական հիւանդութիւններին ոնք- պատող գործակալ	25
XIII	Ընդհատ տենդ	26
XIV	Միազմատիկական հիւանդութիւնների կալողական լվնելը	29
XV	Նոցա յատկանիշ Թոյները	50
XVI	» զարգացման պայմանները	54
XVII	» տարածման նկանակները	55
XVIII	» վարակման ճանապարհները	56
XIX	Վարակիչ հիւանդութիւնների նախապաշտպանողական միջոցներ	58
Ա.	Վարակիչ կալողական հիւանդութիւնների նախապաշտպանողական միջոցները	59
Բ.	Հիւանդներին հեռացնելը եւ առանձնացնելը	40
Բ.	Հիւանդաբեր Թոյնի կենդրուսանալուց խուսափելը	40
Դ.	Հիւանդաբեր Թոյնի բնաշնչելը — օդի դէղինֆէկցիան .	42
Բ.	Վարակիչ միազմատիկական հիւանդութիւնների նախապաշտպանողական միջոցները	45
Դ.	Դէղինֆէկցիայ	46
Բ.	Հիւանդաբեր Թոյնի մուտքի դէմ գործածուած միջոցները	47
Դ.	Գետինը չարացնելն եւ զետնաբուժութիւն	52

ՎԱՐՈԿԻՉ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ.

I

Իւրաքանչիւր հիւանդութիւն կարելի է ներկայացնել իրեւ մարդի մի գործարանի կանոնաւոր կատարման խանգարումն, որն առաջանումէ ուղղակի պատահական արտաքին վեասակար ազդեցութիւններից և կամ կեանքի անյարմար պայմաններից, — ցրտահարութիւնը՝ անբաւական կամ նեխեալ կերակուրը անչափ ուժութիւննը՝ ապականված օդը — հիւանդութիւնների պատճառներ են:

Խսկ մի առանձին կարգ հիւանդութիւններ կան, որոնք թէ իւրեանց ծագման հանգամանքներով և թէ տարածման եղանակով խիստ զանազանվում են միւս հիւանդութիւններից, դա վարակիչ հիւանդութիւններ են, որոնց առաջանալու համար իսկապէս հարկաւոր է առանձնապէս նորան յատուկ պատճառ, հարկաւոր է առանձին հիւանդաբեր թոյն: Ցրտահարութենից կարմուկ չէ կարելի ստանալ, զորա համար անշուշտ հարկաւոր է, որ կազմուածքը թունաւորվի յայտնի թոյնով, որի էութիւնը գեռ մեզ յայտնի չէ, բայց նորա գոյութիւնը անկասկածելի է, և որին անուանում ենք կարմուկ թոյն, նմանապէս աղիների ու իջը նեխեալ կերակուր կամ խակ պտուղ գործածելուց չէ առաջանում, այլ յայտնվումէ կազմուածքի մէջ մի առանձին նիւթ ընդունելուց յետ, որի յատկութիւնը նմանապէս մեզ յայտնի չէ, բայց գոյութիւնը հաւատալի է, և որին անուանում ենք ուժոյն թոյն, մի և նոյն ժամանակ պէտքէ ասել որ կարմուկի թոյնը ուրիշ հիւանդութիւն չէ կարող առաջանել բացի կարմուկից, տիֆային թոյնը — ու իջը, խօշերայինը — իւթերայ:

Պատճառի և հետևանքի այսպիսի յարատեռութիւնը միւս անվարակիչ հիւանդութիւնների մէջ չէ պատահում, մի և նոյն ցրտահարութիւնը, նայելով անհատի յատկութեանը, կարող է մինին հարմուկի առաջացնել, իսկ միւսին հառ, երրորդին արահացաց կամ որովայնաբաժնեան, և գարձեալ հարբուղիսը կարող է առաջանալ զանազան պատճառներից, որոնք ներգործում են քմի լորձիւնոտ մաշկի վերայ:

Իւրաքանչիւր անհատի հիւանդանալու տրամադրութիւնը, որ շատ ուրիշ հիւանդութիւնների մէջ վճռողական կերպով է ներգործում, վարակիչ

Հիւանդութիւնների մէջ, պյնքան նշանակութիւն ունի, որքան զիւրազգաց է անհատը դէպի թոյնը և որքան խիստ է վարակման ոյժը:

Յայտնի է որ մարդկային այլ եւայլ ցեղերը զանազան տրամադրութիւն ունին դէպի հիւանդանալը, բայց մի և նոյն թոյնը մի և նոյն հիւանդութիւն է երեացնում: Մենք դորանով չենք կամենում ասել, որ պատահական արտաքին ազգեցութիւնները, — կլիմայի և օդերևոյթական հանգամանքները, կերակրի յատկութիւնը, ընկերավարական դրութիւնը եայլն, — չեն ազդում հիւանդութիւնների ծագման վերայ, ընդհակառակն, ինչպէս որ յետոյ կիսունք, նշանաւոր դեր են խաղում, որովհետև նորա կամ նպաստում էն կամ արգելում էն հիւանդութիւնների յատկական (սպէցիֆիկական) սերմերին զարգանալուն կամ տարածվելուն և կամ մեծացնում կամ փոքրացնում առանձին անհատների դէպի հիւանդութիւն ունեցած տրամադրութիւնը, թէե ինքն ըստ ինքեան, կլիմայական, օդերևոյթական, տեղային և անյարմար ընկերավարական հանգամանքները — վատ կերակուրը, անպիտան բնակարանը, — չեն կարող վարակիչ հիւանդութիւններ երեացնել, մինչեւ որ նոցա թոյնը նոցա սերմը գոյութիւն չունեան, և մի և նոյն ժամանակ այդ հանգամանքների միջոցով, մի վարակիչ հիւանդութիւն ուրիշ վարակիչ հիւանդութեան չէ փոխվելում:

Վարակիչ հիւանդութիւնները նմանապէս ունին մի յատկութիւն, որով բոլորովին բաժանվում են միւս հիւանդութիւններից. այդ հիւանդութիւններով վարակվում են ոչ թէ առանձին մարդիկ, ինչպէս որ պատահում ցրտաշար հիւանդութենից, մարսողութեան կամ արիւնադարձման գործարանների խանգարութից, այլ միշտ ուր որ յայտնվում են նորա, վարակումն կարձ միջոցում բնակիչներից շատերին, դորա պատճառով նոցա անուանումն համառաք (էպիդեմական) հիւանդութենի:

Եիրաւի է որ միւս հիւանդութիւնները, օրինակ թոպերի բորբոքումն, հազը, որովհյանալուծութիւնը ևայլն մէծ մասամբ կարող են երևիլ տարվան յայտնի ժամանակներում և ուրիշ միջոցներում կարող են անհետանալ, բայց վարակիչ հիւանդութիւնների համաձարակումն ուրիշ պատկեր է ներկայացնում. սովորական ժամանակ այդ հիւանդութիւններից շատերը չեն յայտնվում և ոչ ոք նոցա վերայ չէ մտածում անգամ հիւանդութիւնը առաջանում է յանկարծակի անհոգ բնակիչների մէջ, սկզբից յափշտակում առանձին զոհեր, բայց սովորաբար սաստիկ արագ առաջադիմութիւն է անում և փոքր միջոցում հասնում իւր բարձր զարգացմանը: Յետոյ համեմատաբար կարձ միջոցում անհետանում բոլորովին: Այդ տեսակ համաձարակման սաստիկ զօրանալը կամ թուլութիւնը կախումն ունի մի կողմից արտաքին հանգամանքների թոյնի զարգացման կամ տարածման նպաստութից, և միւս կողմից բնակիչների դէպի թոյն ունեցած զիւրազգացողութենից և նոցա թոյնի ազգեցութեամբ հիւանդանալու տրամադրութենից: Ուրեմն անհատների դէպի թոյն ունեցած զանազան զգացողութիւնը և

թոյնի նշանաւոր կենդրոնանալը, որով նա կարողանումէ ներգործել, պատճառումն այն օտարոտի երկութմբ, որ համաձարակումն խնայումէ բնակիչների շատ թէ քիչ մասը, սակայն այս ևս պէտք է յիշել, որ կան այնպիսի պայմաններ, որոնք վարակիչ հիւանդութիւնների համաձարակ տարածման դիմաւոր յատկութիւնները շատ ազդու կերպով չեն արտայայտում: Այդ պատահումէ մէծ քաղաքներում, ուր սովորաբար նշանաւոր վարակիչ հիւանդութիւնները անընդհատաբար տեսում են, և չկայ միջոց, որով բնակիչները կարողանային ազատ լինել սոյնպիսի հիւանդութիւններից: Այս տեսակ երևոյնները կարել', և բացատրել, եթէ ընդունենք, որ կան տեղեր, ուր գտնվում են թունաւոր նիւթերի շատ թէ քիչ տարածման և զարգացման նպաստող պայմաններ, ուստի հիւանդութիւնը տեղական բնաւորութիւն է ստանում և կարողանում երեւմն սաստկանալ, համաձարակ ընդարձակում ստանալ և քանի մի շաբաթում բնակիչների շատ թէ քիչ մասը հարուածել:

II

Առաջ քան վարակիչ հիւանդութիւնների պյլ եւայլ ձևերի վերայ խօսենք և ախտաբեր թոյնների պատճառներ համառօտ նկարագրենք: — որքան որ ներումէ գիտութեան վերջն հայեացքը, — աւելորդ չէ ծանօթանալ համաձարակ հիւանդութիւնների պատմութեան մի մասի հետ, որ ընդհանուր պատմութեան մի հետաքրքիր կտոր է:

Համաձարակ հիւանդութիւնները հին ժամանակից սկսած մարդկութեան սերունդի մտրակ էին յիշվում և հին վկայագիրները այդ հիւանդութիւններից պատճառած աւերմունքը աղետալի են նկարագրում և ծշմարիտ որ մէծ մահաբեր համաձարակմունք ամենուրեք զարհուրեք և երկիւղ էին տարածում և նորա աւելի նշանակութիւն ունին ազգերի քաղաքակրթութեան զարգացման վերայ, քան թէ մարդկութիւն խռովեցնող և շփոթող միւս դէպերը, որոնք առաջանումն ցած կրերի կամ տնտեսական պահանջողութիւնների զարգացումից: Նմանապէս ազգերի քաղաքակրթութեան զրութիւնը առանց ազգեցութեան չէր մտում վարակիչ հիւանդութիւնների ընթացքի և զօրանալու վերայ. պատմութիւնը ցոյց է տալիս, որ բնակիչների մտաւորական և տնտեսական ստորին զրութիւնը, սովոր պատերազմները, ևայլն... էապէս նպաստում էին համաձարակման տարածմանը ու զոհերի թիւը բազմապատկում, միւս կողմից ևս մենք նկատումնք, քանի որ ժողովրդական բարեկեցութիւնը աճումէ, քանի որ ժողովուրդը լուսաւորումէ, կրթումէ, համաձարակմունք քիչ են կործանիչ և նում, բնակիչներին քիչ են հարուածում: Այդ երևոյնը հասկանալի է, եթէ մտարերենք, որ տնտեսական բարեկեցութեանը և ժողովրդի լուսաւորութեան զարգացման համեմատ առողջապահական պայմաններն ևս բարւորվումն

Դա սահմանադրութեան հիւանդութիւններից առաջացած զարգութիւնների
Դրեւ օրինակ վարակիչ հիւանդութիւններից առաջացած զարգութիւնների
և մոքի ընդհանուր խաւարման, կպատմեմ համառօտ 14 դարում տի-
բող վարակիչ հիւանդութեան հետևանքներն, երբ այդ զարգութելի մի-
ջոցներում մարդկութիւն իրաւունք ունէր ենթադրելու, որ նա դատա-
պարտված է ջնջվելու:

Գրց ձր առաջ սկզբ Հայաստանում բազմմթիւ զոհեր տանելուց յատ ասցաւ առաջ ժամանակի մասնակիւ ընդելով և տարածվեցաւ 1348 թ. Խտալիայում և Սիցի- լիայում, Նէպագում 60000 բնակիչ մեռան, Գէնուայում 40000, Վե- նետիկում 100000 և Ֆլորենցիայիւմ 96000, միւս քաղաքներին ժանտախմտը նմանապէս չէր իննայում, համարեա ամենայն տեղ բնակիչների կէսը զոհում նմանապէս չէր իննայում, համարեա ամենայն տեղ բնակիչների կէսը Ալֆօնս XI թա- կը, Խտալ' այից պյտ մահաբեր ցաւը անցաւ Խոպանիայ, ուր Ալֆօնս XI թա- կաւորին ևս զոհ տարաւ, յետոյ հերթն ընկաւ Քրանսիային, Անգլիային, տարածվեցաւ նմանապէս Դանիայ, Շվեցիայ, Սորվեգիայ և վերջն զոհերը տարածվեցաւ նմանապէս Դանիայ, Իսկ Ալիմէնտ V հաշուով մի միայն Ասիայում կիչ մեռան Եվրոպայում, իսկ Ալիմէնտ VI հաշուով մի միայն Ասիայում կիչ մեռան Եվրոպայում, Այդ թուերը ի հարկէ մերձաւոր թուեր են և 23 միլիօն մարդ զոհվեցաւ: Այդ թուերը ի հարկէ մերձաւոր թուեր են և զիցուք թէ մինչև անգամ փոքր ինչ մեծացրած են, պյնու ամենայնիւ պէտք է ենթալլել, որ ոչ մի ժամանակ աշխարհիս պյտպէս չէր աւերվել, ժանտախմտից առաջացած զարչուրանքները արդարեւ հիմնաւոր են և հաս- կանալի:

թեամբ գուրս եկան Սպօլետօից. այդ ամբոխները սկզբից սակաւաթիւ էին և բաղկացած էին ստորին ժողովուրդներից, յետոյ նոցա թիւը հազարներով բազմացաւ, հարուստներն ևս սկսեցին մասնակցել, յետոյ նոցա չետ խառնվեցան իշխաններ, հոգեորականներ, կանայք, մանուկներ. Մարակազարկները հագած էին երկայն շապիկներ և կնորոշներ, մի քանիսների վերայ նկարագրված էին ապաշխարօղների խաչը, երեսները ծածկված էին քողերով, նոքա շրջում էին քաղաքից քաղաք, երկրպագում էին նահատակների գերեզմաններին, հրապարակաւ մտրակում էին միմեանց երգեկով հոգեոր երգեր, նոցա նպատակն էր խաղաղութիւն ինդրել երկնքից և ատիպել մարդիկներին ապաշխարել և իւրեանց օրինակին հետևել:

Ժանտախտի ժամանակ այդ տեսակ հանդէսներ սաստիկ տարածվեցան Գերմանիայում, Գրանսիպայում և Եվրոպայի քանի մի տեղերում, վերջը մտրակազարկները սկսեցին այլ և այլ իրաւունքներ ևս գործ դնել, նորա հաստատում էին, իրք երկնքից են ուղարկված և կամենում էին հրաշք-ներ գործել, այդ պատճառով չոգերականութեան հետ կոռուցան, միենոյն ժամանակ նորա սկսեցին և մարմաւոր կառավարութեան իրաւունքներին ձեռնամուխ լ նել, սկսեցին այլ և այլ պահանջներ յայտնել, նորա հետ ևս կոռուցան, վերջը թէ չոգերականուներ և թէ տէրութիւններ, պաշտ-պաներվ իւրեանց արտօնութիւնները, արգելեցին այդ հանդէսները 1350 թ.

Հրեաների հալածումն ևս վկայում է մարդիկների ստորին կրթերի յուղ-
մունքը, Երբ ժանտախտը երևեցաւ, սկսեցին մեղադրել Հրեաներին, իրը
նորա թունաւորում են ջրհորները և ժանտախտի տարածումն են պատ-
ճառում, հալածանքները բազմացան. Ստրասբուրգում 1884ից 900 Հրեա-
ներին այրեցին, 1349 թ. մարդիկների ամրոխները մանգաղներով զինաւոր-
ված անցնում էին Էկյան գետի վերայ եղած քաղաքներով, քանդելով և
կողոպտելով բոլորը Ճանապարհում, Մայինց քաղաքում 12000 Հրեաներ
իւրեանց այրեցին, որ հալածանքներից ազատվին, թէ Գերմանիայում և
թէ Եվրոպայի միւս մասներում հազարաւոր Հրեաներ ենթարկված էին
տանջանքների, միենոյն ժամանակ արժանի է յիշել Հրեաների և նոցա
կանանց կամակորութիւնը. Վախենալով, որ քրիստոնեաները շիլեն և
չմկրտեն մանուկներին, նորա ձգում էին իւրեանց մանուկներին բորբռված
կրակի մէջ և իւրեանք ևս այրվում էին. Այդ զարհուրել՝ միջոցին ամե-
նայն բան սպասելու էր:

Մինչդեռ Գերմանիայում այրում էին Հրեաներին, Իտալիան այն ժամանակ աւելի զարգացած և լուսաւորված լինելով, աշխատում էր պաշտպանել իրեան աւելի խելացի և մարդավայել միջոցներով. 1403 թ. Վենետիկում երեք առողջախնամ հոգատարներ Նշանակվեցանու որոնց տուած էր առանձին իրաւունք ժամանակի գեմ բալոր միջոցներ գործ դնելու. այդ ժամանակներում առաջին անգամ Վենետիկում հիմնվեցաւ հիւանդանոց ժամանակակիցված հիւանդների համար:

III

Համաձարակ հիւանդութիւնների ախտաբեր թղյնի էութիւնը մեզ գեռ
յայտնի չէ. նոքա մի քանի յատկութիւններ են արտայայտում, որոնցով
մօտաւորապէս կարելի է նոցա բնութեան վերայ հասկացողութիւն կազմել։
Առանց ընկնելու զանազան տեսութիւնների և ենթադրութիւնների մէջ՝ որ
այս վերջին ժամանակներում յայտնվեցան, մենք կաշխատենք համառօտ
տեղեկութիւն տալ պյն հիմքերի մասին, որոնց վերայ գիտնականներից շա-
տերը ենթադրում են, որ վարակիչ նիւթերը ամենաստորին կենդանիների
կազմութիւն ունին։

թեր, կարելի է բողըրովին համոզվել այն ժամանակ, երբ կարելի կլինի առողջներին այդ մարմիններ պատուաստել և եթէ պատուաստելուց յետոյ համապատասխան հիւանդութիւն կարօղանայ առաջանալ, պէտք է որ վերցիշեալ եզրակացութիւնը հաստատէ: Ի հարկէ այդ տեսակ փորձեր մարդիկների վերայ անել կարել չէ, բայց նայելով կենդանիների վերայ արած փորձերին (սիրիբեան վերը կոչված վարակված հիւանդների արիւնով պատուաստելն) շատ հաւանական է ընդունել, որ այդ մանր կազմուածքների հետ արդարև վարակիչ թշոյնը կապ ունի: Ընդհանրապէս ախտաբեր թշուների էութեան խնդիրը վճռված չէ և չնայելով գիտնականների բոլոր ջանքերին և աշխատութիւններին, այդ կողմից մեր տեղեկութիւնները թերի են, մենք աւելի հանդիպում ենք զանազան տեսութիւնների և ենթադրութիւնների քան թէ փաստական գիտելքների:

Բարեբաղդաբար վարակիչ հիւանդութիւնների այն յատկութիւնները, որոնք շարժումն առողջապահութեան հետաքրքրութիւնը, բաւական անկախ են վարակիչ թոյների էութենից, ուստի և կարելի է յուսալ, որ հիմնվելով միայն վարակիչ հիւանդութիւնների առաջանալու և տարածվելու հանգամանքների տեղեկութիւնների վերայ, կարելի է գտնել նպատակայարմար առողջապահական միջոցներ, վարակիչ հիւանդութիւնների դեմքործ դնելու, ձմեռ մինչև անգամ շշաջողի իմանալ վարակիչ թոյների էութիւնը:

IV

Ընդհանրապէս առողջապահները երկու գլխաւոր կարգ են բաժանում վարակիչ հիւանդութիւնները, հիմնվելով նոցա տարածման եղանակների վերայ, որոնք նմանապէս իւրաքանչիւր թշնի յատկութենից և նորա գոյութեան պայմաններից կախումն ունին:

Արակիչ հիւանդութիւնների մի տեսակը փոխադրվում է հիւանդներից առողջներին ուղղակի հպաւորութենից և մինչև անգամ միւնցն հիւանդի բնակարանում ներկայ լինելուց գտնվելով կարծ ժամանակ, է-բ-բ-է կամ բժանոր տէֆոն հիւանդի բնակարանում կարելի է վարակվել, անգամ հիւանդին ըլմօտենալով, ուրեմն պէտք է ենթադրել որ հիւանդը բոլորովին պատրաստ թոյն է իրանից գուրս հանում (քրտինքով կամ շնչառութեամբ) և բնակարանի օդի հետ խառնում: Հիւանդութիւնը աւելի ճշգութեամբ է փոխադրվում, եթէ վարակիչ հիւմը ուղղակի առողջ մարդի արիւնի մէջ է մուծանվում, օրինակ ինչպէս ծաղիկ պատուաստելու ժամանակ, երբ փոխադրում են ծաղկի բշտկի մէջ բովանդակածի մի կաթիլը մաշկի փոքրիկ վէրքի մէջ:

Այդ կարգի վարակիչ հիւանդութիւններին վերաբերում են. ի-բ-ի-ն-է-
ս-ո-ր-լ-ո-ր-ի-ն-ա-ն, ծ-ա-լ-ի-լ, ի-բ-ի-բ- + -ի-ն (րօյա), թ-ծ-ս-ս-ը + է-ի-լ' , ա-ն-դ-ր-դ-ը) + է-ն-ր-ը.
+ է-ի-ք-ո-ր-է-ր-ը :

Թունաւոր նիւթը, մարմի մէջ մտնելով, գտնումէ պայմաններ իւր բազմանալը և վերանորոգութեան համար և դուրս է գալիս մարմից բոլորովին պատրաստ և վարակիչ յատկութեամբ, դորա պատճառով այդ կարգի պատկանող հիւանդութիւնները կոչվում են Հարակիչ հարուտիան (փոխադրական) հիւանդութիւններ (կոտագօզնա Յոլքն). Այդ կարգի հիւանդութիւններին Պէտէնչօֆէրը անուանումէ հարմի մէջ ձնունդ ունեցող վարակիչ հիւանդութիւններ, պատճառ որ դոցա ախտաբեր գործակալը մարդի կազմուածքի մէջն է աճում:

Դոցանից բացառութիւն է ֆիլիս (syphilis), որին կարելի է անուանել լուս կարակիչ հիւանդութիւն, որովհետեւ դա փոխադրվումէ միմիպյն հպաւորութեամբ (կամ ժառանգաբար) և ոչ օդի միջոցով:

Վարակիչ հիւանդութիւնների երկրորդ կարգին վերաբերումն այն տեսակները, որոնց թունաւոր նիւթը չէ փոխադրվում հիւանդից առողջին ոչ հպաւորութեան և ոչ օդի միջոցով, այդ հիւանդների ոչ շնչառութիւնը, ոչ քրտինքը, ոչ էկսկրէմնար շունին իւրեանց մէջ այն տեսակ նիւթեր, որոնք հպվելով կարողանային առողջներին վարակել, այդ հիւանդները ուշրեմն պատրաստ թոյն չեն արտաքս հանում դորա զարգացման համար, հարկաւոր է անշուշտ մարդի կազմուածքից դուրս առանձին պայմաններու դա տեղի օդերևոյթական, կլիմայական հանգամանքներն են, *): Որոնք նպաստումն թոյնի զարգանալուն աճելուն:

Այդ կարգի վարակիչ հիւանդութիւններին վերաբերումն աղիներ ու ֆլուս (վարդացաւ), իօներան, գլուխութը, մնանար ու նուրը, ժանախութը և բրնձութը: Այս բոլորը մասնաւուիան հիւանդութիւններ են կոչվում կամ հարմուկ դուրս ծնունդ ունեցող վարակիչ հիւանդութիւններ, ինչպէս որ Պէտէնչօֆէրն է անուանում:

Դոցա մէջ ընդհատ տենդը մի առանձին տեղ է բռնում, որին կարելի է անուանել լուս մազարիակիան հիւանդութիւն, որովհետեւ նորա թոյնի ծագումն կախումն շունի հիւանդի մարմից, այլ նա կապված է բոլորովին երկրի զրութեան հանգամանքներից: Ի հարկէ դորա թոյնը կարող է օդային ընթացքով իւր սահմանից փոքր ինչ հեռաւորութեամբ տարածվել, բայց նա նոր տեղերում համաժարակ կարող չէ երկիլ, բայց մասնաւոր քանի մի դէպքերից:

Խսկ այդ զասին պատկանող մնացեալ վարակիչ հիւանդութիւնների առաջանան հիւանդի մարմից կախումն ունի, նորա համար որ թէպէտ ասացինք որ հիւանդի մարմինը իւր մէջից չէ դուրս հանում պատրաստ թոյն:

(*) Թէ որքան գետնի ջրի մակերեւոյթի գրութիւնը, նպաստումէ այդ կարգի վարակիչ հիւանդութիւնների վարդացմանը, կբացատրենք յետոյ, երբ կիսունք ընդհատ տենդի վերայ:

այլ այս թօյնը կազմվումէ մարմնից գուրս, բայց պէտք է ընդունել, որ հիւանդի կազմուածքը առաջանումէ մի բան, որի բացակայութիւնը թօյնին ընդունակութիւն չէ տալիս վերանորոգվելու և ախտաւորելու: Բայց դորանից այս վարակիչ նիւթերը կարող են տեղափոխվել իւրեանց կենդրոնից, թէ շորերի և թէ ապրանքների միջոցով, բաւական հեռու տեղեր և կարող են վերանորոգվել և ածել, եթէ կապաստէ երկրի զրութիւնը, ուրեմն կարող են համաձարակման պատճառ դառնալ:

Մենք ընդունում ենք, որ վարակիչ հիւանդութիւնների այս տեսակ բաժանում շատ թէ թերի է և ժամանակին ի հարկէ պէտք է որ զանազան փոփոխութիւնների ենթարկվի և նշանաւոր զարգացման հասնի, բայց դա համապատասխան է ախտաբեր թօյնների յատկութիւնների և վարակիչ հիւանդութիւնների տարածման այժմեան տեղեկութիւններին:

Այժմ զառնանք վարակիչ հիւանդութիւնների ծագման և տարածման մասնաւորութիւնները նկարագրելուն, և խօսենք այն առողջապահական միջոցների վերայ, որոնք կարող են այդ հիւանդութիւնների առաջանական պատճառ առաջանական համաձարակման պայմաններն են, *): Որոնք նպաստումն թօյնի զարգանալուն աճելուն:

Վ. Ա. Բ. Ս. Կ. Ի. Զ. Կ. Պ. Ռ. Ա. Կ. Ա. Ն. Հ. Ո. Ւ. Ի. Թ. Ի. Ի. Ն. Ե. Բ.

V

Բնակչան ծառին թօյնը սաստիկ վարակիչ է, և ոչ մի հասակ վարակվելուց աղատ չէ, յայտնի է որ արգանդի մէջ անգամ մանուկը կարող է վարակվել իւր մօրից: Դիտողութիւններից երեսում որ դէպի ծաղկի թօյն ունեցած տրամադրութիւնը երբեմն թուլանումէ և կամ բոլորովին անհետանում, որովհետեւ կան անհատներ, որոնք թէպէտ գտնվումն շարունակաւար այդ թօյնի աղցեցութեան տակ, բայց չեն վարակվում: Մի անգամ ծաղկով հիւանդացողը կորցնումէ իւր տրամադրութիւնը կրկին հիւանդանալու կամ բոլորովին և կամ բաւական երկար ժամանակ: Ծաղիկը փոխադրվումէ հիւանդներից առողջներին ուղղակի կամ անուղղակի միջոցներով: Հաստատ յայտնի է, որ ծաղկի վարակիչ կազողական յատկութիւնը նորա բշտկի մէջն է բովանդակվում, նորա ներգործութիւնը աւելի խիստ է, երբ այդ բշտկի առաջուց պարզ բովանդակութիւնը սկսվումէ պղտորվել թէպէտ և չորացած բշտկներն անգամ վարակիչ զօրութիւն ունին, որոնք շին ժամանակ ծաղիկ պատուասելու համար են գործ զրվում: Դեռ յայտնի չէ խուսի, մէզի և թուրքի վարակիչ յատկութիւնները. վարակվել կարելի է ոչ թէ միայն հիւանդից, այլև նորան շըշապատող իւրերից, թէպէտ թօյնի վարակիչ զօրութիւնը պակասումէ, քանի որ հեռանում հիւանդից: Ծաղկին տրամադրված անհատները աւելի շուտով են վարակվում որքան նորա երկար միջոց հիւանդի մօտ են լինում, որքան հիւանդի բնական փոքրը է և որքան բնակարանում հիւանդների թիւը շատ է: Հիւանդի վերաբեր է և որքան բնակարանում հիւանդների թիւը շատ է:

ւանդը կարող է վարակիչ նիւթ առաջացնել գեռ ևս հիւանդութեան յատ-
կական նշանն չքրեցած միջոցին, օրինակ ծաղկով հիւանդանալու այն
գեպքերը, երբ հիւանդները զժուարանում են բացատրել վարակման աղ-
բերը: Ծաղկի թոյնը բաւական երկարատեւ է, եթէ արտաքին աղեցու-
թիւններից պատսպարված է, իսկ եթէ մընոլորտ օդի աղեցութեան տակ
է, նա իւր վարակիչ ընդունակութիւնը կորցնումէ, երկի շատ անօրացած
լինելու պատճառով: Վարակիչ թոյնը բնաջինը է լինում սաստիկ տա-
քութենից, քլօրի, ծծումբի, եօդի գոլորշուց և կամ ալկօօլից (սպիրտ):
դորա համար հարկաւոր է այդ թոյնամաքրիչ (ձևափակրցուցիչ) նիւթերով
երկար ներգործել վարակված առարկաների վերայ: Ծաղկի վարակումն
հաւանական է որ շնչառութեան ճանապարհով է կատարվում, և յիրա-
ւի որ այդ եղանակով վարակումն կարող է հեշտ պատահել, որ և հաստա-
տում էին 2ինացիների ծաղկի պատուաստելու սովորութիւնը: Նոքա ծաղ-
կի բարու կեղերը քմի մէջ էին խցում, վարակումը շուտով յայտնվումէր:
Ծաղկի կարող է երեխլ կամ թեթեւ և կամ սաստիկ աւերիչ չարակ-
մունքով: շատերը հաստատում են որ իր ծաղկի համաձարակմունք կըրկն-
վում են նշանաւոր ժամանակներում (12—15 տարի): Կանոնաւոր մատե-
մատիկական ծզութեամբ: Այսպէս թէ այնպէս, պէտք է ասել, որ ծաղկի
համաձարակմունքը պարբերաբար են երեւում, որ իրաւի նշանաւոր կապ
ունի այն հանգամանքի հետ, թէ կան արդեօք գեպի վարակում տրամա-
դրված անհատներ թէ ոչ: Ծաղկի համաձարակման յատկութիւնները շատ
զանազան են լինում: Վիճակազրական տեղեկութիւնները համոզում են,
որ ծաղկահատութեան դործ զրելուց սկսած, համաձարակման երկիւղը բա-
ւական թուլացաւ: Թէպէտ պէտք է յիշել, որ այժմ ևս պատահում են
մեծ համաձարակմունք, ինչպէս 1871—1872 թ. համաձարակումն էր:
Աւ ծաղկիը (variola haemorrhagica) մի փոքր բացառութեամբ, միշտ մա-
շառիթ հետեւանքներ ունի: Մանուկները ծաղկից աւելի են մեռնում քան
թէ հասակաւորները: Կուրշման ասումէ, որ տասն տարեկանից ծաղկով
հիւանդացող մանուկներից կէսը մեռնում են:

VI

Այն փաստը, որ մարդ մի անգամ մի որեկիցէ վարակիչ կպչողական ցա-
ւով հիւանդացած լինելով շատ թէ քիչ աղատվում է մի և նոյն հիւանդու-
թեամբ կրկն վարակվելուց պատճառ է զարձել ծաղկահատութեան դոր-
ծաղրութեան: Հին լուսաւորված աղզերին յայտնի էր, որ մարզը միան-
գամ ծաղկի հանելուց յետոյ, կորցնում է կամ նուազում է նորա ընդու-
նակութիւնը, կրկն ծաղկով վարակվելու: Ինչպէս և իցէ երկրորդ անգամ
պատահած վարակումն անցնում է բաւական թեթեւ կերպով, սորանից
երեւում է որ մարդի կազմուածքը փոքր առ փոքր թոյնին ընտելանում է և

կորցնում է կամ նուազում է նորա տրամադրութիւնը գեպի վարակիչ թոյնը:
Այդ պատճառով շատ բնական է, որ մարզիկ գեռ հին ժամանակներում
աշխատում էին արհեստական ձեռվ բնական ծաղիկը պատուաստել (ԱԻԿԿ-
ԼԱՊԻՅԱ) ցանկանալով թեթեւ ծաղիկ ունենալ և գորանով պահպանել մարզին
առաջիկայ սպասելի վարակումից և ծանր հիւանդութիւնից: Զինա-
ցիներ սովորութիւն ունեին իւրեանց մանուկներին ծաղիկ թոյնով լոց-
ված շապիկներ հացցնել և կամ քմի մէջ ծաղիկ բաշկի կեղեները լցել:
Արևելեան Հնդկաստանում բնական ծաղիկ պատուաստեն սովորութիւն
էր գարձել և բրամինների ձեռքի տակ էր և գործ էր ածվում իրրե մի
կրօնական արարողութիւն և դորա պատճառով շատ տարածված էր: Այդ
տեսակ ծաղկահատութիւնը կովկասեան երկիրներում ևս ընդունված էր,
համարեայ Ասիայի բոլոր հին աղզերը միմեանցից անկախ այդ միջոցով
աշխատում էին աղատվել ծաղիկ սաստիկ համաձարակումից:

Մինչև XVIII դարը բնական ծաղիկ պատուաստելու տեղեկութիւնները Եվ-
րոպյայում սակաւ են, միայն յայտնի է, որ 1720 թ. Եվրոպյայի հասարա-
կութիւն ուշագրութիւնը գարձեց դորա վերայ լէզի Սօնտէզիւ, Կոստանդ-
նուպոլիսի անգլիական գեսպանի ամուսինը: Նա տեսնելով բնական ծաղիկ
պատուաստելու բարենպատակ աղզեցութիւնը, պատուաստել տուեց նորան
իւր զաւակներին: այն ժամանակից սկսած բնական ծաղիկ պատուաստելն
(Էնօլի-Էտացիան) տարածվեցաւ Անգլիայ, Շվեցիայ և Լիթվանգլիայ, ուր հա-
մարվում էր միակ ծաղիկ գէմ պաշտպանողական միջոց, և հարկէ պէտ
տեսակ միջոցը բաւական երկիւղալի էր և նորա առողջապահական աղատիչ
ներգործութիւնը կասկածելի էր, որովհետեւ պատուաստվողներից շատերը
մեռնում էին, և բացի դորանից պէտք եղանակով արհեստական կերպով
ծաղիկ թոյնը աշազին քանակութեամբ տարածվումէր, պէտք է ենթագրել
համաձայն գոկտօր Բօնի, որ միայն ծաղիկ առաջացած անսահման զար-
հուրանքը կարողանում էր մարդկութիւնը ստիպել այդ տեսակ երկիւղալի
միջոցն յօժարակամ գործ դնել:

Թէպէտ առողջապահական կողմից այդ միջոցը հերքվում է, բայց ինչ
և իցէ բնական ծաղիկ պատուաստելն ևս իւր օգտաւեա հետեւանքներն
ունեցաւ, նա պարզ ցոյց տուեց որ կարելի է երկիւղալի հիւանդութեան
առաջն առնել արհեստական կերպով թեթեւ հիւանդութիւն պատճա-
ռելով, այս փաստը նպաստեց հասարակութեանը ընդունելու և ճիշդ հաս-
կանալու պատահմանը գտած առողջապահական ծաղկահատման եղանակը,
որի մասին այժմ կիսումնք:

Ծաղկահատման խնդիրը մեծ քայլ առաւ անցեալ 90 թուականներին,
երբ հաստատապէս յայտնվեցաւ, որ կովերի ծծերի վերայ առաջացած ծա-
ղիկը (Վակվակ), մարդիկներին պարտուաստված լինելով, պաշտպանում է
բնական ծաղիկ վարակումից: Սորանից առաջ ևս յայտնի էր, որ պատահ-
մաքը կովի ծաղկով վարակված մարդիկ բնական ծաղկով պէտ ևս չէին

Հիւանդանում, մինչև անգամ սաստիկ համաձարակմունքի ժամանակն ևս։ Առաջին անգամ դիտմամբ կովի ծաղիկ պատուաստեց Անդիայում կալուածատէր Բէնիամին Զէստի, որն առաջուց ինքն իր վերայ փորձելով կովի ծաղիկ պահպանողական զօրութիւնը, պատուաստեց 1794 թ. կովի ծաղիկը իւր ամուսնուն և երկու զաւակներին։ Նորանից յետոյ բժիշկ Էգուարդ Զէնիրը հաստատեց, որ մարդկային մարմին վերայ կովի ծաղիկ^{*)} պատուաստելուց յետ առաջացած բշտիկներ պարունակումն թոյն (գյումանիզ-րովանիա լիմֆա), որ մի և նոյն պաշտպանողական յատկութիւնն ունի, ինչպէս և նախկին կովի ծաղիկ բշտիկ բաղադրութիւնը։ Բայց չնպյելով դորան, քանի մի տէրութիւններ կասկածում էին կովի ծաղիկ պատուաստման մասին։ Մինչև 1840 թ. Անդիայում մարդի ծաղիկ պատուաստումն բաւական գործ էր դրվում։ 1838 թ. աւերիչ ծաղիկ համաձարակութիւնը յետ, Անդիայի կառավարութիւնը համոզվելով մարդկային ծաղիկ պատուաստման վատ հետեւանքների մասին, արգելեց բոլորովին։ Շվեցիայն Անդիայից առաջ օրէնքով հրամայեց մարդկային ծաղիկ պատուաստող բժիշկներին զրկել բժշկական իրաւունքներից։ Միւս եվրօպական տէրութիւնները արդէն սկսել էին կովի ծաղիկ պատուաստելու, բայց պէտք է ասել, որ ամենայն տեղ, բացի Շվեցիայից, ծաղկահատութիւնը թոյլ էր տարածվում և վերջին 1870—1872 թ. ծաղիկ մեծ համաձարակումն ստիպեց մի քանի տէրութիւններին աւելի եռանդ գործել և հասարակութիւնը համոզել ծաղկահատութիւնը պարտաւորված կատարելու, այժմ ևս պարտաւորեալ ծաղկահատութեան դէմ հակառակորդներ շատ կան, ուստի հարկաւոր ենք համարում համառօտ բացատրել այդ հակառակորդների ծաղկահատման մասին արած ընդիմաբանութիւնը։

Ծաղկահատութեան հակառակորդները պնդումն թէ նորա առողջապահական և նախապաշտպանական յատկութիւնները ցնորդ են։ Նոքա ասումն, թէև ծաղկահատութեան պաշտպանները աշխատումն վիճակագրական թուերով հաստատել ծաղկահատութեան օգուտը, բայց կարելի չէ այդ թուերի վերայ մեզ յստ զնել, որովհետեւ ոչ մի տեղ և ոչ մի անգամ վիճակագրական տեղեկութիւնները հարկաւոր ծշութեամբ և զգուշութեամբ չէին հաւաքվում։ Հակառակորդների կարծիքով, հիմվելով այժման վիճակագրութեան վերայ, կարելի է առանց պյկեայլութեան հաստատել, որ բոլորովին զանազանութիւններ չկան չպատուաստվողների կամ պատուաստվողների հիւանդանալու յաճախութեան մէջ։ Նոքա նմանապէս ենթադրումն որ իբր թէ պատուաստվածների և չպատուաստված-

(*) Վերջին հետազոտութիւններին նայելով պէտք ենթադրել, որ կովի ծաղիկը իւրեւ առանձին հիւանդութիւն գոյութիւն չըւնի եւ թէ մինչեւ այժմ ընդունված կովի ծաղիկը առաջանումէ մարդկային ծաղիկը կովի վերայ պատուաստելուց յետ։

ների հիւանդութեան ընթացքի մէջ ևս զանազանութիւն չկայ և իբր թէ մեռնողների թիւը բոլորովին չէ սակաւացել քանի որ ծաղկահատութիւնը ընդունված է։

Եւ երկրորդ ծաղկահատութեան հակառակորդները աշխատում են համոզել, որ ծաղկահատութիւնը շատ անդամ մանուկների առողջութեան վերայ է ներգործում, նոքա պնդում են որ յաջողակ ծաղիկ պատուաստելուց առաջացած մանուկի ընդհանուր հիւանդութիւնը անմասն չէ նորա դեռահաս հասակին և կարող է ծանր խանգարումն պատճառել մանուկի կազմուածքին։ Նմանապէս նոքա ասում են, որ մանուկներից շատերը հիւանդանում են և մեռնումն է կարմիր քամի (րոյա) կոչված տկարութենից, որ առաջանում է պատուաստված տեղից և վերջապէս որ ոչ մի մանուկ պաշտպանված չէ ծաղկահատութեան միջոցին վարակվելու դէմ միւս ամենավարակիչ սիֆիլիս հիւանդութեամբ, որի թոյնը պատահմամբ կարող է լինել պատուաստելու ծաղիկ աւշշկի (լիմֆա) մէջ։

Յիրաւի որ եթէ վերոյիշված պակացոյցները ծշութեամբ ընդունեինք, պէտքէ վերջին մահառիթ վճիռ արտասանենք ծաղկահատութեան մասին։ Պէտքէ վերջին մահառիթ կարմիր քամի քամաճայնեցնել։ Յիրաւի և այդ երկու հակառակորդ կողմերը չալողեց համաճայնեցնել։ Յիրաւի որ մինչև վերջին ժամանակ ծաղկով հիւանդանալուն կամ մեռնելուն և կամ ծաղկահատութեան վերաբերեալ տեղեկութիւնները, մի քանի բացառութեամբ, անպիտան են և ոչ ոք չէ կարող դոցանից օգուտ քաղել, ծաղկահատութեան նախապաշտպանողական զօրութիւնը հաստատելու համար։ Այդ վիճակագրական տեղեկութիւնների զիաւոր թերութիւնը այն է որ թէ պատուաստված և թէ չպատուաստված հիւանդացողների և մեռնողների թուի մէջ ուշագրութիւն չէ դարձրած թէ որքան պատուաստվածներ և որքան չպատուաստվածներ կան մի որ երից հասարակութեան մէջ։ Ի հարկէ ծաղկահատութեան օգուտը այն ժամանակ միայն կարելի կլինի հաստատել, երբ կերկի, որ համաձարակման ժամանակ հիւանդութեան կամ մահի դէպերը չպատուաստվածների մէջ աւելի են քան թէ պատուաստվածների մէջ։

Վիճակագրութիւնը մի պակասութիւն ևս ունի, որ ուշագրութեան արժանի է երկու հակառակորդներին ևս պատուաստված բառի միտքը ոչ մի տեղ իսկապէս չէ որոշվում, սովորաբար այդ բաժնին վերաբերում են ամենքնն, ում որ մի ժամանակ պատուաստված է եղել ծաղիկը, առանց ուշագրութիւն գարձնելու թէ արդեօք ծաղկահատութիւնը յաջող էր կատարված թէ ոչ և թէ քանի միջոց է անցել պատուաստելու օրից։ Այդ բառի միտքը անորոշ և շփոթ լինելով բնական է, որ վիճակագրական ցուցանինքնի մէջ պատուաստվածների կարգում գտնվում են այնպիսիները, որոնք կար մէջ պատուաստված լինել և կամ այնքան երկար միջոց է անցող են անյաջող պատուաստված

ցել ծաղկահատութեան օրից, որ նորա պաշտպանողական զօրութիւնը անցել է և ուրեմն այդ հանգամանքներում պէտք է որ դոքա չպատուաստվածների կարգում համարվին: Եթէ մենք նայենք այդ կողմից այժմեան վիճակարական տեղեկութիւններին, յիրաւի կհամոզինք, որ թէ ձիշդ դիտողութիւններ և թէ կանոնաւոր հաւաքված տեղեկութիւններ շատ քիչ են գտնվում: Ուրեմն և բժիշկների թերահաւատ յարաբերութիւնը դէպի այդ տեղեկութիւնների նշանակութիւնը բացատրելի է:

Խնչ և իցէ, չնայելով այդ անպէտք տեղեկութիւններին, կարելի է դոցա մէջ գտնել և այնպիսիներ, որոնք արդարե կարողանում են հաստատել ծաղկահատութեան նախապաշտպանողական զօրութիւնը: Օրինակ մտաբերնք մի ամրող զարում հաւաքված Շվեյցիայի վիճակարական տեղեկութիւնները, որոնք ցոյց են տալիս, որ XIX դարում շարունակաբար ծաղկից մեռնողների թիւը սակաւացել է, ծաղկահատութեան տարածման համեմատ: Բացի դորանից գտնվում են և այս վերջին ծաղկի համաձարակմանը վերաբերեալ մի քանի վիճակարական գրաւոր աշխատութիւններ, որոնք անշերթելի հաստատում են, որ չպատուաստվածների մէջ թէ հիւանդացողներ (ծաղկով) թէ մեռնողներ աւելի էին պատահում քան թէ պատուաստվածների մէջ: Պէտք է ասել որ այդ տեղեկութիւնները կանոնաւոր են հաւաքված, հիմնաւոր են և կատարեալ և պէտք է ընդունել որ դոցանից առաջացած եղակացութիւնները ևս պիտի որ ճշմարտութեան մօտ լինին:

Այդ հետազօտութիւններից մին է գօկտօր Ֆլինցերի արած 1870—1871 թ. ծաղկի համաձարակման նկարագրութիւնը Խէմիլից քաղաքում (Սակսոնիայում) և երկրորդ գօկտօր Միլլերի աշխատութիւնը մի և նոյն համաձարակման մասին Վալդիչէյմ քաղաքում:

Խէմիլից քաղաքում գօկտօր Ֆլինցերի հետազօտութեամբ երևեցաւ, որ այդ քաղաքի 64253 բնակիչներից գտնվում էին.

53891 պատուաստվածներ (յաջող պատուաստ) 83, 87%.

5712 չպատուաստվածներ 8, 89%.

4652 բնական ծաղիկ ունեցողներ 7, 24%.

Համաձարակման ժամանակ վարակվեցան 3596 հոգի = 5, 60%. քաղաքի բնակիչներից, նոցա մէջ գտնվում էին.

953 պատուաստվածներ . . . 1, 76%. բոլոր պատուաստվածներից.

2643 չպատուաստվածներ . . . 57, 23%. բոլոր չպատուաստվածներից:

3596 վարակվածներից մեռան: 249 = 6, 32%. որոնք են. 221 մանուկներ,

14 տարեկանից ցած և միայն 28 չափահամներ: Մեռած մանուկները բոլորովին պատուաստված չէին, իսկ չափահամ մեռնողներից 21 չէին պատուաստված: Ուրեմն պատուաստվածներից մեռան 2, 81%, իսկ չպատուաստվածներից 97, 19%, ուրեմն բառերով 953 պատուաստված հիւանդներից մեռան 0, 73%. և 2643 չպատուաստված հիւանդներից 9, 16%:

Գօկտօր Միլլերի աշխատութենից երեսում, որ Վալդիչէյմ քաղաքի 5055

բնակիչներից 4713 = 93, 2%. պատուաստված էին (և բնական ծաղիկ հանողներ) և 342 = 6, 8%. չէին պատուաստված (անյաջող պատուաստված): 1872 թ. յունվար ամսից մինչև 1873 թ. ապրիլը վարակվեցան 124 = 2, 6%. պատուաստվածներից (կամ բնական ծաղիկ ունեցողներից), և 126 = 36, 6%. չպատուաստվածներից (կամ անյաջող պատուաստվածներից): Մեռած ծաղկից 66 մարդ: չպատուաստվածներից 43, 6%, իսկ պատուաստվածներից 8, 8%:

Այս տեսակ ձիշդ տեղեկութիւններն ափսոս որ քիչ են բժշկական գրականութեան մէջ և դոցա հաստատումն, որ համաձարակման ժամանակ չպատուաստվածներն աւելի են վարակվում և մեռնում քան թէ պատուաստվածները:

Ծաղկահատումն վատ աղջեցութիւնները մանուկների ընդհանուր առողջութեան վերայ չունին ոչ բաւական հաստատողութիւն և ոչ ևս ընդհանուր նշանակութիւն, այդ մասին չունինք ընդարձակ դիտողութիւններ և պէտք է ասել որ ծաղկահատման հակառակորդների այդ յանդիմանութիւնը կարող է հիմնվել միայն իւրաքանչիւր բժշկի անձնական փորձի վերայ:

Յիրաւի որ պատուաստվելուց յետ երբեմն պատահումէ հարմիք +ամի անուանեալ հիւանդութիւնը, բայց շատ սակաւ, այդ հիւանդութիւնը լինում է սովորաբար կրթարանական տներում (воспитательные дома) և իսկ մասնաւոր բնակարաններում և կամ ընդհանրապէս հասարակական ծաղկահատութեան մէջ շատ քիչ է պատահում:

Ծաղկահատութեան միջոցով սիֆիլիս ախտի տարածումն արդարե պատահումէ, անհատի (որից վերցնում ծաղկապատուաստման աւիշկը — լիմֆայ) բժշկական ամենազդոյշ քննութիւնը ոչ մի ժամանակ սիրալունքից չէ պահպանում, որովհետեւ ծածուկ սիֆիլիսի դէպքերը (այսինքն սիֆիլիս հիւանդութեան երեսը) ժամանական ժամանակաւոր բացակայութիւնը) բաւական յաճախ են պատահում մարդիկների մէջ, և պէտք է ասել որ այդ տեսակ սիրալունքը վատ հետեւանքներ են առաջացնում թէ պատուաստվածի և թէ բժշկի համար, թէ պէտք բժիշկն յանցանք չունի: Այդ հանդամանքը աւելի վասակար հետեւանքներ պիտի ունենայ այն երկիրներում և քաղաքներում, ուր սիֆիլիսը բաւականաչափ տարածված է և շուտով կարող է հերքել ծաղկահատութեան օգուտը և պահատցնել հասարակութիւնը զէպի ծաղկահատութիւն ունեցած համարում:

Այժմ աշխատում են մարդկային աւըշի (гуманизированная лимфа) դորձածութիւնը սահմանափակել և դորա փօխարէն գործ դնել կենդանական աւիշկը (որ ստացվումէ մարդկային ծաղիկ պատուաստված կովերից և հորթերից): Գրեաղջաբար մինչև այժմ ասեակ փորձառութիւններ յանցութեամբ չեն վերջացել: փորձը ցոյց տուեց որ հորթի աւիշկը շատ անցողութեամբ չէ պատուաստվում (20—30%), իսկ մարդկային աւիշկը ընդգամ լաւ չէ պատուաստվում (20—30%), իսկ մարդկային մէծ մասամբ յաջող է պատուաստվում: Ուրեմն թէ պէտք մի հակառակն մէծ մասամբ յաջող է պատուաստվում:

Կողմից կենդանական աւիշկը պատուաստելով, սիֆիլիսով վարակվելը սահմանափակվում է, բայց միւս կողմից կենդանական աւրշկի զօրութիւնը պակաս լինելով շատ անգամ նա անյաջող է պատուաստվում. պէտք յուսալ, որ չետզչետէ կենդանական աւրշկի ստանալու եղանակը պիտի որ կատարելագործվի և անյաջող պատուաստման դէպքերը պիտի պակասին: Բայց դորանից հարկաւոր է միշտ պատուաստել ուղղակի հորթից վերցրած աւիշկը, որովհետեւ մինչեւ այժմ կենդանական աւշիկի զօրութիւնը պահպանելու համար գեռ ևս եղանակներ չեն գտել:

Ուրեմն պէտք ընդունել որ մարդկային կամ կենդանական ծաղիկ աւշիկ պատուաստելը բաւական պահպանումէ մարդին ապագայում երկիւղալի բնական ծաղկով վարակվելուց, թէև այդ նախապաշտպանական զօրութիւնը մի քանի տարուց յետոյ (10—15 տարի) նուազումէ և պէտք այդ միջոցից յետ կրկին պատուաստել: Մարդից վերցրած լիմֆան ունի աւելի պաշտպանողական ոյժ քան թէ հորթի լիմֆան: Բայց նա մասամբ երկիւղալի է, պատճառ որ սիֆիլիկական թոշնը լիմֆայի հետ կարող է լինել ուրեմն և մարդը կարող է սիֆիլիսով վարակվել:

Այդ հանդամանքների վերայ պէտք ուշք դարձնել, երբ կամենումնեն որ և իցէ հասարակութեան մէջ ծաղկահատութիւնը տարածել պարտաւորապէս:

Եթէ տէրութիւնը դիտաւորվումէ պարտաւորական անել ծաղկահատութիւնը, նա միևնոյն ժամանակ բարոյապէս պարտաւորվումէ պահպանել հասարակութիւնը այն վատ չետեանքներից, որոնք կարող են երկիւղական միջոցին: Միևնոյն ժամանակ նա պէտք է բարոյապէս համոզէ հասարակութիւնը, որ պարտաւորեալ ծաղկահատութիւնը օգտաւէտ է*), իբրև նախապաշտպանական միջոց ծաղկի դէմ, պէտք է կազմակերպէ ձիշդ ծաղկական վիճակագրութիւն, որով կարելի կրկնել քննել ծաղկահատման յառաջադիմութիւնը: Խսկապէս այդ տեսակ աշխատութիւնները պէտք է պարտաւորական ծաղկահատութիւնը ժողովրդի մէջ մտցնելուց առաջ պատրաստել բայց ստիպողական պահանջները, ուրիշ բառերով բարոյական հարկաւորութիւնը շատ անգամ հարկագրումէ տէրութիւններին այն միջոցներ գործ դնել, որոնց հիմունքը գեռ սակաւ են բացատրված տեսակաբար: Եւ պէտք որ այդ կէտից նայել ստիպողական ծաղկահատութեան: Ինչ և իցէ մշտական կանոնաւոր կազմակերպված վիճակագրական դիտողութիւններ, ծաղկահատման ազդեցութեան և ծաղկի համաձարակմունքի ընթացքին վերաբերմամբ ոչ թէ միայն աւելորդ պէտք է համարել, այլ ընդհակառակն անշուշտ գործադրելի: Բայց դորանից հարկաւոր է աշխատել լիմֆան:

(*) Երբուրդ բժշկական միջազգային ժամանակակից 1873 թ. Վ. Էնդարես 156 բազմութեամբ վճռեց հարկաւոր համարել ծաղկահատութիւնը եւ առաջարկել նորա ստիպողական դործադրութիւնը.

Կարելի լինի փոխել, նոյնպէս հաստատ և իսկական, բայց ավեաս նիւթով: Կրկնածաղկահատութիւը (քերականակ) հարկաւոր է շատ վաղ չկատարել, երբեմն նա առանց հետևանքի է մնում, և վերջը դժուար է որոշել, թէ որին պէտք է պատուաստած համարել և որին ոչ, կարծես քաներորդ տարին կրկնածաղկահատութիւնը յարմար է: Համաձարակման մօտենալու ժամանակ պէտք է աշխատել կրկածաղկահատել բոլոր զեռահասներին, մօտաւորապէս 10 տարեկանից սկսած: Վերջապէս հարկաւոր է աւելացնել, որ լաւ կլինէր միմիայն բժիշկները կտրէին ծաղիկը, որոնք կարող են աւելի կատարելութեամբ գործել, բայց ափսոս որ բժիշկները սահաւաթիւ լինելով, այժմ դժուար է դորա մասին մտածել: Ուստի պէտք է առժամանակ այդ գործը յանել բայց բժիշկներից, վիրակապներին և զայեակներին, որոնց ի հարկէ պէտք է առաջուց մանրամասնարար ծաօթացնել ծաղկահատութեան սկզբունքի և նշանակութեան հետ, և վերջապէս նոցա գործուելութիւը բժիշկները պէտք է աշխատեն որբան կարելի է վերադիտել:

VII.

1. Այս ժամանակի վարակումը սաստիկ է, նա կարող է առաջանալ հիւանդների արիւնով պատուաստելուց, նմանապէս հիւանդների արտասուզքը, քմիթի, խոչափողի և նորա ձիւղերի լորձիւնու նիւթը ևս վարակիչ յատ կութիւն ունին: Խւրաբանչիւր առարկայ որևիցէ կեռպով հիւանդներին հպուած լինելով — ի միջի այլոց և բժշկի հագուստը — կարող են վարակիչ թոյնը տարածել: Ընդհանրապէս կարմրուկը հիւանդների հետ յարաբերութիւն ունեցողներին է վարակում, դորա համար բաւական է շատ թէ քիչ միջոց հիւանդի բնակարանում լինել: Բայց անհատական տրամադրութիւնը հիւանդանալու համար ունի ևս մեծ նշանակութիւն ի հարկէ և թոյնի որքանութիւնը հիւանդի բնակարանի մէջ: Թոյնի քանակութիւնը աւելի մեծ պիտի լինի վատ հողմարարված բնակարաններում կամ հիւանդանոցներ րում, քան թէ կանոնաւոր հողմարարներ ունեցող աներում: Բայցի ընտանեկան յարաբերութիւնը, մանկական պարտեզները և ուսումնարանները շատ անգամ վարակման աղբիւր են գառնում: Կարմրուկի տարածումն ուսումնարանների միջոցով աւելի հեշտ կարող է պատահել, մին որ առողջ մանուկները, որոնց ընտանիքում կարմրուկով հիւանդ կայ, կարող են շորերի հետ վարակիչ կարմրուկի թոյն տարածել ուսումնարանների մէջ: և կամ կարող է պատահել որ արդէն վարակված մանուկները, լինելով հիւանդութեան առաջին շրջանում, երբ հիւանդութեան արկածները պարզ չեն արտայայտված, շարունակումն ուսումնարան երթևեկութիւն անել, մինչեւ հիւանդութեան պարզիւր, երբ ծնողները արգելում են նոցա ուսումնարան գնալ, ի հարկէ անհասկածելի է որ կարմրուկով վարական մանուկները հիւանդութեան այդ շրջանում կարող են միւս ընրակված մանուկները:

7/11 1922

3

կերներին և վարակել, շատերը ասում են և փորձերն ևս հաստատում են, որ այդ շրջանում կարմրուկի թոյնը աւելի է ներգործում։

Բժշկական դրականութեան մէջ գտնուում են շատ օրինակներ, որոնք հաստատում են կարմրուկի ուղղակի փոխազրական տարածման եղանակը։ Պանում ասում է որ ամբողջ 65 տարուայ միջոցում Փարէյեան կղզիներում կարմրուկ չէր յայտնված մինչև որ ցամաքից եկած մի կարմրուկով վարակած անձն ներս բերեց այդ կղզիներում վարակման աղբերը։ Նա ամենից առաջ վարակեց իւր ծնողներին, յետոյ վարակումը շուտով տարածվեցաւ բոլոր կղզիներում, այնպէս որ 7 ամսի միջոցին այդ կղզիների 7782 բնակիչներից մօտ 6000 հոգի վարակվեցան կարմրուկով։ Բոլոր բնակիչները, 65 տարեկանից ցած որոնք ոչ մի ժամանակ չէին ունեցել կարմրուկ արտասահմանում (ցամաքում) վարակվեցան կարմրուկով, այդ փաստը հաստատում է որ մեծ հասակն անգամ անգայ չէ կարմրուկի թոյնին, և թէ այդ հիւանդութիւնը դեռահաս հասակից յետ շատ քիչ է պատահում, կարելի է բացատրել այն կերպով, որ մարդիկներից մեծ մասը գեռահաս հասակին տալիս են իւրեանց տուրբը։ — կարմրուկ ունենալով — և թէ նոքա մի անգամ հիւանդացած լինելով նոցադէպի կարմրուկի թոյն ունեցած տրամադրութիւնը թոյլանումէ և կամ բոլորովին անհետանում։ Խոկ եթէ մի ոք չափահասներից գեռ կարմրուկ հանած չէ, կարող է համաձարակման ժամանակ հիւանդանալ որպէս և մանուկները։

Կարմրուկի համաձարակմունքը պատահում են տարվան բոլոր եղանակներին, բայց գլխաւորապէս երևում են աւելի ցուրտ ամիսներում։ Խարմրուկից առաջացած մահի դէպքերը ընդհանրապէս շատ չեն, այնպէս որ կարմրուկը կարելի է թեթև վարակիչ հիւանդութիւնների կարգում յիշել, միջին թւով հարիւր հիւանդներից մինը կամ երեքը մեռնում են, իսկ աւելի սաստիկ համաձարակմունքի ժամանակ մահի դէպքերը կարող են հասնել մինչև 10° . և աւելի։ Կարմրուկով հիւանդացողների հասակը մեծ նշանակութիւն ունի հիւանդների համար։ ընդհանրապէս կարելի է ասել, որ մանուկների համար կարմրուկը աւելի երկիրալի է և թէ երկիրալ հիւանդեակին համեմատ արագ թեթևանումէ։ Հիւանդանոցներում, չքաւորների բնակարաններում... և այլն, կարմրուկից առաջացած մահկանացութեան տոկոսը աւելի է, վատ և անյարմար առողջապահական պայմանների պատճառով։ Ոյժից ընկած, վատ կամ անչափաւոր սնունդ ստացած անհատները և ընդհանրապէս աղքատները աւելի են մեռնում քան թէ առողջակազմ կամ թէ կարողութիւն ունեցող մարդիկներ, որ և կարելի է ասել ոչ թէ միայն կարմրուկի վերաբերմամբ, այլև բոլոր վարակիչ հիւանդութիւնների։

VIII.

Սէրեսուն (շառագոյն կարմրուկ — քութէ), վարակիչ յատկութիւն ունի. հիւանդութիւնը տարածվում է ինչպէս և կարմրուկը, հիւանդների և

կամ այն առարկաներ միջոցով որոնց վերայ ինչ և իցէ կերպով վարակիչ նիմթը կապած է, ուրեմն կարող է համաձարակումն առաջացնել այն տեսակ երկիրներում, ուր ոչ մի ժամանակ սկարլատինը անգամ պատահած չէ։ Բժշկական դրականութեան մէջ կան օրինակներ, որոնք հաստատում են սկարլատինի տարածման այդ եղանակը, առանձնացած տեղեր, գլխաւորապէս կղզիներ և մինչև անգամ ամբողջ աշխարհի մասեր աղատ են եղանակը վարակման աղբերը։ Երարակվելու համար բաւական է փոքր ինչ միջոց լինել հիւանդի բընկարանում։ Վարակիչ նիմթը կարող է տարածվել ոչ թէ միայն շորերի, գրքերի, մանուկների իսաղալիքների և այլն... միջոցներով, այլ մինչև անգամ կաթը կարող է վարակման աղբերը լինել, եթէ գնվումէ այնպիսի մարդիկներից, որոնց բնակարաններում սկարլատինի հիւանդներ կան։

Շատ հիւանդութիւններ կան, որոնք հաստատում են որ սկարլատինի թոյնը բաւական երկարատև է, այնպէս որ նա հպելով զանազան առարկաների վերայ, բաւական երկար միջոցներ (ամիսներ, տարիներ) պահպանումէ իւր վարակման ընդունակութիւնը, նմանապէս նա զիմանում է սաստիկ ցրտին ու բնացինջ է լինում Ռէօմիւրի ջերմաչափի 80° աստիճանի տաքութենից (այսինքն ջրի եփկելու ժամանակ)։ Սկարլատինի թագուցեալ շրջանը (սուկանական պերիօդ) աւելի փոքր է քան թէ կարմրուկինը և ծաղկինը։ յայտնի է որ կարմրուկի թագուցեալ շրջանը շարունակվում է 8—10 օր։ ծաղկինը 7—14 օր, իսկ սկարլատինի թագուցեալ շրջանը շարունակվումէ միջին թուով 4—7 օր։

Սկարլատինը կարող է վարակել հիւանդութեան առաջին արկածների ժամանակ։ թէպէտ և յայտնի որ նա աւելի վարակիչ զօրութիւն ունի հիւանդի առողջանալու միջոցին։ այսինքն հիւանդի մաշկի թեփը իստակվելու միջոցին։ Անհատական տրամադրութիւնը դէպի սկարլատինն այնքան նշանակութիւն չունի, որքան որ կարմրուկին և ծաղկին։ Շատ օրինակներ ցոյց են տալիս, որ կան մարդիկի, որոնք իւրեանց բոլոր կեանքում անընդունակ են սկարլատինով հիւանդանալու, չնայելով որ նոքա շատ անգամ սկարլատինի թոյնի աղդեցութեան տակ են լինում։ Մարդիկների այս տեսակ անընդունակութիւնը բացատրումէ այն դէպքերը, երբ միենին ընտանիքի մէջ, մի քանիսները վարակվում են, իսկ միւսները ոչ չնայելով որ ամենքն ևս միւսնոյն թոյնի աղդեցութեան տակ են և ոչ մինը նոցանից նախապաշտպանողական միջոցներ չէ գործ դնում։

Հասակը բաւական աղդեցութիւն ունի սկարլատինով հիւանդանալու տրամադրութեան վերայ։ նորածինների հիւանդանալու տրամադրութիւնը անշան է, երկրորդ տարեկանից մինչև եօթն տարեկան հասակը արամագրութիւնը դէպի սկարլատինը սաստիկանումէ և տամն տարեկանից յետ արագ փոքրանումէ։

Սկարլատինի տարածման գլխաւոր աղբեկները մեր ուսումնարաններն և մանկական պարտէզներն են, այդ բանի վերայ պէտք է մեծ ուշադրութիւն դարձնել, առաւել ևս որ սկարլատինի թցնը տարածվում է մանուկների մէջ, ուրեմն և նուրբ հասակ ունեցողների մէջ, որոնց համար այդ հիւանդութիւնը շատ երկիւղալի է։ Աստ հողմահարած դասատները կարող են երկար միջոց վարակման կետրօն դառնալ։

Սկարլատինի համաճարակմունքը լինում են թեթև և ծանր, թեպէտ առաջինները շատ քիչ են պատահում. այն սկարլատինի համաճարակումը, որ 100 հիւանդացողնեցից 10%. մահ է պատճառում, պէտք է թեթև համարել, աւելի սաստիկ համաճարակմունքը տալիս են 13/-18%—40%.

JX.

Հասարակական առողջապահութեան համար աւելի նշանակութիւն ունի
կարմիր քամու թոյնի երկարակեցութիւնը։ Թույնացինց նիւթերը դժուար
են ներգործում զորա թոյնին, այնպէս որ նորա առաջն առնելու համար եր-
բեմն հարկաւոր է լինում բոլորովին դատարկացնել և փութով մաքրել
հիւանդների բնակարանները, ուր թոյնը կեղրոնանում է։ Կարմիր քամուց
առաջացած մահի դէպքերի համար ընդհանրապէս ոչինչ չէ կարել, ասել,
որովհետեւ նա մեծ մասամբ երկում է միւս հիւանդութիւնների հետ կը-
ցեալ իբրև երկորորդական և շատ անգամ ծանր հիւանդութիւն։

X.

Բժառար աէքը սաստիկ վարակիչ յատկութիւն ունի, վարակվելու համար բաւական է փոքր ինչ միջոց հիւանդի բնակարանում գտնվել, զեպի հիւանդութիւնը միևնույն տրամադրութիւն ունենալով աւելի շուտով

կարելի է վարակվել քանի որ երկար միջոց հիւանդի մօտ գտնվել, այդ
պատճառով հիւանդապահները յաճախ են վարակվում քան թէ բժիշկ-
ները, իսկ բժիշկները աւելի են վարակվում քան թէ ուրիշները, որոնք քիչ
յարաբերութիւն ունին հիւանդի հետ։ Բժաւոր տիֆի վարակիչ թոյնը
շատ հետառվեամբ կարող է մի տեղից միւս տեղ տարածվել, առողջներն
անգամ իւրեանց շորերով կամ ուրիշ առարկաներով կարող են տարածել
մի բնակարանից միւս բնակարան և մինչեւ անգամ՝ հեռու տեղեր ևս ա-
սումնեն տիֆով հիւանդների կտաւեցների լուացարարները յաճախ են
վարակվում։ Մեծ նշանակութիւն ունի վարակիչ թոյնի համակետրոնա-
նալու աստիճանը, քանի հիւանդի բնակարանը, բնակիչներին համե-
մատ, ընդարձակ է, քանի բնակարանի հողմարարութիւնը կանոնաւոր
է, այնքան ևս հիւանդին շրջապատողների վարակվելու երկիրը քիչ է։
Միւս կողմից սենեակներ և բնակարաններ, բնակիչներով լցված լինելով,
և անկանոն հողմարարներ ունենալով, կարող են վարակման զարհութելի
բուն և աղբեւր դառնալ։ եթէ մի որևէցէ կերպով դոցա մեջ վարակիչ
թոյնը ներս բերված լինի։

Այդ է պատճառը, որ համարեա բոլոր փոքր իշտեւ մեծ քաղաքներում գտնվում են յայտնի կետրոններ, ուր բծաւոր տիֆլը զարհութելի կերպով տարածվում է և երկար ժամանակ տիրապետում է։ Լերերտ ասում է, որ 1868—69 թ. համաձարակման ժամանակ, Բրեսլավլ քաղաքի երկու նըշանաւոր փողոցներում հիւանդացան բծաւոր տիֆով համարեա բոլոր քաղաքում հիւանդացողների կէսը։ Պետերբուրգ քաղաքի տիֆային համաձարակմունքի հետազօտութիւնները հաստատեցին, որ բծաւոր տիֆը կետրոններում գլխաւորապէս մշակների, չքաւորների և այլն բնակարաններում։ Ընդհանրապէս իւրաքանչիւր համաձարակման ժամանակ կարելի է համոզվել, որ բծաւոր տիֆը չքաւորների և աղքատ դասի մէջ աւելի է տահաճողվել, մի կողմէ շատ մէ քիչ կարողութիւն ունեցողների մէջ, մի կողմէ այդ պատճառով, և միւս կողմէ այն հիման վերայ որ բծաւոր տիֆի մից այդ պատճառով, և միւս կողմէ այն հիման վերայ որ բծաւոր տիֆի համաձարակմունքը շատ անգամ ուղղեկցում են սովորին։ այդ հիւանդութեան «քաղցած տիֆ» են անուանել։

Այժմեան հայեացքով բժաւոր տիֆը չէ կարող միայն սովից առաջա-
նալ, մինչև որ նորա յատկանիշ վարակիչ թղյնը գոյութիւն չունենայ-
ինչ և իցէ պէտք է ընդունել որ ժողովուրդների մեծ զրկանքների ժամա-
նակ, դեպի այդ հիւանդութիւն ունեցած անհատական տրամադրութիւնը
նմանապէս մեծանում է, ուստի և մի անգամ ներս բերված վարակիչ
թղյնը հարուածումէ գլխաւորապէս այն անհատներին, որոնց կազմուածք-
ները թուլացել են, ձնշվել են անշափաւոր սնունդ ստանալուց։ Անկաս-
կածելի է որ անշափաւոր սնունդ ստացած մարդիկները թղյնի ընդունելու-
թեան և զարգացման համար աւելի լաւ ալբիւր են դառնում, և նոքա
թղյնին ընդդիմանալու այնքան կար չունին, որքան որ կանոնաւոր սնունդ

ստացած անհատները, և ընդհանրապէս իւրաքանչիւր բժաւոր տիֆի համաձարակման ժամանակ չքաւոր դասը աւելի է տանջվում և զոհվում:

Միևնոյնը կարելի է ասել և առարկան արևի մասին, որի համաձարակմունքը պատահում են սովորաբար միևնոյն բժաւոր տիֆի համաձարակմունքի ժամանակ և որի ծագման և տարածման եղանակներն եւ բաւական նման են բժաւոր տիֆին:

XI.

2նայելով որ 300 տարուց աւելի է անցել թիֆունի առաջին անգամ՝ նկարագրելուց, բայց դեռ նորա զարհուրելի հետեւանքները մինչև ցայժմ մում են առանց փոփոխութեան. համարեա վարակիչ կազողական հիւանդութիւններից միայն դիֆտերիտը կարելի է աւելի մահաբեր համարել: Հիւանդութեան առաջին երկոյթները յայտնվում են մարմինի այն մասերում: ուր ուղղակի թշն ներգործել է (քթի, կոկորդի, խոչափողի, աղիքների լորձիւնոտ մաշկում), իսկ յետոյ բոլոր մարմին հիւանդութիւնն է առաջանում, և զիսաւորապէս դորանով է զանազանվում դիֆտերիտը միւս վարակիչ հիւանդութիւններից: Ցայտնի է որ բոլոր վարակիչ հիւանդութիւնները սկսվում են մարմին ընդհանուր տկարութեամբ (տեսդ ևայլն...) իսկ յետոյ մարմին միւս մասերում են երկում հիւանդական փոփոխութիւնները. և այդ պատճառով ընդհանուր տկարութեան ոյժը համապատասխան է տեղական փոփոխութեան ընդհարձակմանը և սաստկութեանը:

Մեր Կովկասեան երկիրներում դիֆտերիտը ժամանակ առ ժամանակ տիրապետումէ սաստկաբար զոհելով դեռահաս մանուկներին, նա շատ անգամ սկսվումէ կոկորդի ուռուցքով և շարունակվում է կոկորդի և շնչափողի լորձիւնոտ մաշկով և սկսումէ խեղդել մանուկներին փակելով շնչառութեան ձանապարհը:

Վարակումը կարող է առաջանալ ուղղակի հպաւորութենից, երբ օրինակ հիւանդը հազելով դուրս է հանում խուխի հետ դիֆտերիտական քերութեածը (պլենկա) և նետումէ վերահսկող բժշկի երեսին և կամ միւս իւր շուրջ եղողներին, և կամ կարող է վարակումը պատահել օդի միջոցով, երբ խուխի վարակիչ նիւթ ունեցող մասնիկները կազում են հագուստներին, կամ կարասներին, պատերին ևայլն, որոնց վերայ շորանում են և յետոյ փոշի դառնալով խառնվում են օդի հետ: Բնակիչների մէջ դիֆտերիտը սաստիկ արագութեամբ չէ տարածվում ինչպէս որ կարմրուկը և ծաղիկը: Երբեմն նա սաստիկ կամակորութեամբ ներգործումէ մի սահմանափակված տեղում, կամ մի որ և իցէ տանը և մինչև անգամ սենեակում: Դիֆտերիտի թշնը բաւական երկարատեւ է, այնպէս որ երկար ժամանակ համաձարակումց յետ երբեմն երբեմն պատահում են հիւանդութեան մի մի դէպքեր:

Հիւանդութիւնը դժուվումէ աշխարհիս բոլոր մասերում, բայց զլիաւորապէս կետրոնանումէ բարեխառն գօտու երկիրներում: Մանուկները աւելի են հիւանդանում քան թէ չափահաները: Դիֆտերիտից առաջացած մահի դէպքերը զանազան են, նայելով համաձարակմունքի սաստկութեանը, երբեմն նա հասնումէ 30%—70%, և աւելի:

Վ.Ա.Կ. ՄԻԱԶՄԱՏԻԿԱԿԱՆ ՀԻՄՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ.

XII.

Ընթերցողին յայտնի է որ մենք ընդհատ տեսնիլը Պատշաճէ հիւանդութեան անուանեցինք*) , որովհետեւ նորա թշնի ծագումը կախումն չունի հիւանդի մարմից և թէ ինքն հիւանդի կազմուաճքը բոլորովին մասնակցութիւն չունի թէ թշնի ծագման հետ և թէ որ և իցէ թշնի նպաստող կամ առաջացնող գործակալների հետ: Բոլոր պայմանները, որք ազդում են թշնի առաջանալուն մարդից արտաքոյ են գտնում, ուրեմն ի՞ր ծագման էպանակով ոյդ հիւանդութեանը բուրբուն հաղանձն և արեական հանգամների հետ և ինքն հիւանդութեանը ընդունակութեանը լունի դարձելու այդ հիւանդութեանը, տակառ-ին հորածից աղոտ երիներում: Թէ պէտք յայտնի է որ ընդհատ տեսնի վարակիչ թշնը կարօղ է օդային ընթացքով իւր սահմանից շատ թէ քիչ հետառութեամբ տարածուել, բայց նա նոր տեղերում համաձարակ կարող է երկիլ, բացի մի քանի մասնաւոր դէպքերից:

Ընդհատ տեսնի և ընդհանրապէս միազմատեկական հիւանդութիւնների սկզբանական պատճառները գտնւում են գետնի մէջ, նորա աշխարհագրական դրութեան և փիզիկական յատկութիւնների մէջ, այժմ դառնանք և խօսենք, գետնի այն պայմանների վերայ, որք նպաստում են այդ կարգի վարակիչ հիւանդութիւնների ծագմանը և զարգացմանը:

Ընդհանրապէս մէնք ի վաղուց սովորել ենք գետնի վերայ անտարբեր նայել, կարծես թէ դորա դրութիւնը մեր առողջութեան յետ անկապ է այդ կետից նայելով մարդկութիւնը շատ անգամ մեծ վնասներ է կրել և մինչև ցայժմ դեռ քիչերն են համոզուած որ գետինը այնքան ևս նշանակութիւն ունի որքան և օդը: Բաւական է միայն ուշադրութիւն դարձնել գետնի մշակական (ԿՈՂԵՏՐԿԱԿ) ազդեցութեանը կիմայի վերայ, որով փոքր ի շատէ կարելի է հասկացողութիւն ունենալ նորա նշանակութեան մասին: Բոլորովին անշարժ կամ քիչ մշակուած կամ զժուարակութ անտառներով և ծահիճներով ծածկուած գետինը, վատ ներգործութիւն ունի կլիմայի վերայ: Հիւսիսապէս կողմերում այդ տեսակ երկիրները ցուրտ խոնաւ և մառախ:

(*) Տես Երես 8:

լապատ են, իսկ հարաւային կողմերում նոքա երկիւղալի միազմատեկական ցեղումն են առաջացնում։ Գետինը մշակելով, այսինքն ոչնչացնելով աւելորդ անտառները, որով արեգական ճառագայթները երկրի մակերեղոյթի վերայ կարողանան ներգործել ճահճները չորացնելով, գետերի ընթացքին կանոնաւոր ուղղութիւն տալով կարելի կինի կլիմային առողջարար և բարեխառն յատկութիւններ տալ։ Բաւական է օրինակի համար։ Համեմատել միջին Եվրոպայի երկրների այժմեան կլիմայի դրութիւնը, նորա առաջուայ դրութեան հետ, երբ ինչպէս պատմում են հռովմացեցիների մատենագիրները, բոլոր գերմանիայում ոչ մի պտղատու ծառ չէր բուսնում, երբ էռենոս գետի դաշտավայրում արջ և եղն (լուս) էին բնակում և երբ Շօտլանդիայի և Իրլանդիայի մէջ եղած ծովը սառչում էր։ Հակառակ օրինակներ ես կան որք հաստատում են որ հողի մշակութեան նուազումն և անկումն վեսակար տեսդային հիւանդութիւններ են առաջացնում, Campagna Romana անուանեալ մի ժամանակ հռովմի նշանաւոր շրջականերից մինչ անինամ թօղնեցուզ, ինտէ բնդհատ տենդի լուն է դարձել։

Գետնի աղդեցութիւնը բնակիչներու առողջութեան վերայ գլխաւորապէս կայեանում է այն յատկութիւնների մէջ՝ որ նա տալիս է իւր հետ կցուած օդին և իրանից հոսող ջրին։ Բացի գետնի մակերևոյթի զրութիւնը, բաւա- կանի մեծ նշանակութիւն ունի նորա մեքենայեական կարգաւորութիւնը և քի- միական բաղադրութիւնը։ Շատ սիալ է ընդունել թէ որտեղից որ գետինը է սկսում, այն տեղ օդն է վերջանում։ Իւրաքանչիւր գետին շատ թէ քիչ ջրի համար թափանցիկ է, ուրեմն առաւել ևս նա թափանցիկ պէտք է լի- նի օդի համար, որովհետեւ գետնի հողի ամենափոքր մասնիկները շատ մօտ չեն, այլ նոցա մէջ մեծ թէ փոքր ծակոտիք են մնում, ամենապինդ քարերն անքամ արդ յատկութիւնն ունին։

Գետնի ծակոտիքներում լցուած օդը անշարժ չէ այլ ընդհանրապէս գետնի ծակոտիքներում լցուած օդը անշարժ չէ այլ ընդհանրապէս շարժողութեան մէջ է։ Մակոտեալ գետինը ջրի համար կարող է ևս շատ թէ քիչ թափանցիկ լինել, այսինքն գետնի մէջ ջուրը երկար կամ կարճ միջոցում կարող է ներս ծծուել, որով և նորա ցամաքելու ժամանակն էլ տարբեր է լինում։ Գետնի տեսակները հաւասարաշափ ծակոտիքներ ունենալով, կարօղ են շատ թէ քիչ ջուր ծծել նա- յելով որ տեսակին է պատկանում գետնի հողը։ Դիւրափիխուր աւազոտ գետինը մեծ քանակութեամբ և շատ արագ է ներս ծծում ($60/.$ $90/.$) նմանապէս և շատ արագ ընդթափ բաց է թողնում։ Աւախսառն գետինը քիչ թափանցիկ է, չնայելով որ կաւը աւելի ծակոտիքն է, քան թէ աւազը, այնու տեմնայնիւ ջուրը նորանից քիչ է թափանցուում, այն պատճառաւ որ կաւի նիւթը օսստիկ ձգուում ունի դեպի ջուրը։ ուստի և իւր մէջ ծծելով նորան չի թողնում որ թափանցի։ Աւել շատ ջուր ծծելով, կամակորու- թեամբ պահում է, այնպէս որ չոր եղանակին անգամ գետինը խոնաւ է մուռմ։ Ընդհանրապէս պիտի և ասել որ ջուրը կաւային հողից կարող է

ցնդելով միայն հեռանալ և ոչ թէ ծորելով կամ խոնաւածիծ խողովակներով
(պըհնաժանն :) Կրաքարի միջով զուրը աւելի հեշտ է ծորում քան թէ կաւի ,
և դժուար է ծորում քան աւազի միջով :

Ծակոսկէն և օդի ու ջրի համար զիւրաթափանց գետինը, չոր և առող-ջարար է, նա այն ժամանակ կարող է վնասակար լինել, երբ գետնի մակերևոյթի տակ գտնուում են ջրի համար անթափանցիկ շերտեր անբաւական վայրահակներով, այնպէս որ ջուրը մնում է անշարժ և չէ հոսում; այդ տեսակ գետինը ճախճախուտ է և բոլոր երկիրը խռնաւ է պահում:

Կըրաբանչիւր գետնի տակ շատ թէ քիչ խորութեամբ, գտնուում են թէ
կաւային և թէ պինդ քարային շերտեր. որոնք ջրի ծաման արգելք են լինում
գոյց վերայ հաւաքվում է մինողորտի մնացորդների (անձրւի, ձեան) այն
մասը, որ գետնի մակերևոյթից չէ ցնդել կամ չէ հոսել աւելի փոս անդերւ
Խոնաւութիւնը այդ շերտերում հասնում է այն աստիճանին, որ նոցա մէջ
եղած օդը գուրս է գալիս և նորա տեղը բռնումէ այն ջուրը, որին անուա-
նումնք չէ պահպան ջուր *), ուրեմն գետնի ջուր ասելով մնք պէտք է հասկանանք
այն ջուրը, որ լցնում է վերին ծակոտէն գետինը անթափանցիկ կարգից
սկսած։ Մի և նոյն ժամանակ չպէտք է ներկայացնել թէ, գետնի ջուրը
հորիզոնական ուղղութիւն ունի, այլ նորա դրութիւնը կախումն ունի ան-
թափանցիկ կարգի դասակարգութիւնից, որի վերայ հաւաքուած է ջուրը։
Այդ կարգերի մէջ եղած փոսերում ջուրը ստորերկրեայ լիճեր է կազմում
և ծորում է հանդարտ հեղեղով, վայրահակ ուղղութեամբ։ Ընդհանրա-
պէս անթափանցիկ կարգերը վայրահակ դրութիւն ունին այն գետերի ըն-
թացքի վերաբերութեամբ, ուր նոքա հոսում են, ուրեմն գետերը բնական
խոնաւածիծ խողովակների գեր են խաղում։ բացի գետնի յատկութիւնից,
գետնի ջրի դրութիւնը կախումն ունի նմանապէս միջնորդտի մնացորդների
քանակութիւնից (անձրւ, ձիւն)։ Անձրւային ժամանակ, գետնի մէջ շատ
ջուր ծուելուց, բացի գետնի մակերևոյթը խոնաւանալը, գետնի ջրի դրու-
թիւնը ևս բարձրանում է, եթէ նորա հոսանքը մի որ և իցէ պատճառաւ
գետնի ջրի դրութիւնը կախումն ունի նմանապէս միջնորդտի մնացորդների
քանակութիւնից (անձրւ, ձիւն)։ Անձրւային ժամանակ, գետնի մէջ շատ
օդով լցուած ծակոտիքները, ջրով են հեղեղուամ։ Երկար երաշտութեան
միջոցին գետնի ջրի մակերևոյթի դրութիւնը ցածանում է և կրկին հողի
ծակոտիքները լցուամ են օդով։

(*) Աւրեմն առանձին դէպքերում ջրհորի ջուրը համարնուն է գետնի ջրին. եւբեմն
պատահում է որ ջրհորի առաջին անթափանցիկ կազմի վերայ եղած ջուրը չէ բաւա-
կանացնում մեր կենսական պիտոյքները. վասն որոյ հարկադրուած պէտք է
ջրհոր խօսացնել մինչեւ երկրորդ կամ երրորդ անթափանցիկ շերտը, առողջապահա-
կան կետից այդ երկրորդ կամ երրորդ անթափանցիկ շերտերի ջրերը, գետնի ջրին չեն
համապատասխանում. որովհետեւ նորա ազգեցութիւն չունին վերին շերտերը խոնա-
ւացնելու:

Այս կերպով գետնի մակերևոյթի շերտերը երբեմն ջրով և երբեմն օդով լցուած լինելով, ազդում են գետնի մէջ գտնուած քիմիական երեղյթների և կամ ստորին կազմուածքների (կենդանիների) կենսարարութեան վերայ:

Ցայտնի է որ փայտը չոր օդի կամ ջրի տակ լինելով բոլորովին չէ փըտում, իսկ եթէ փայտը երբեմն չորանում է կամ երբեմն թրչում է, շուտով փտում յայտնում է. սորան համոզուելու համար բաւական է նայել հեռագրական սիւներին, որը նեխուում են լինելով մասսամբ օդի և մասամբ խոնաւ հողի մէջ: Մի և նոյնը կատարվում է գետնի մէջ. քանի որ գետնի մակերևոյթի կարգերը խոնաւ են և կամ բոլորովին ջրով են լցուած, նոցամէջ գտնուած գործարանաւոր նիւթերը դանդաղ են նեխուում իսկ հենց որ գետնի ջրի մակերևոյթը ցածանում է և գետնի վերին շերտերի ծակոտիները լցուում են օդով, գործարանաւոր նիւթերի լուծուիլը սաստկանում է: Զերմութեան ազդեցութիւնից քիմիական գործողութիւնները գետնի մէջ կրկնապատկվում են և երբ հողի մակերևոյթի կարգերի ջերմութեան աստիճանը աւելի է բարձրանում, որ լինում է ամառվայ վերջերում և աշնան սկզբներում, այն ժամանակ գետինը հարստանում է ածխաթուով (սլեքուլու), որ ինչպէս յայտնի է առաջանում է գործարանաւոր նիւթերի լուծուելուց:

Վերսիշեալ փաստերը առողջապահական կողմից մեծ նշանակութիւնունին, նկատուած է որ շատ տեղերու մ որովայնայ տիֆը (աղիքների տիֆը) և խօլերան պատահումնեն գետնի ջրի մակերևոյթի ցածանալու, այսինքն գետնի մակերևոյթների շերտերի ցամաքելու ժամանակ, իսկ հակառակ դեպքերում — գետնի ջրի մակերևոյթի բարձրանալու ժամանակ — համաձարակումները անհետանում են:

Իերինում, Միւնիէնում և մի քանի այլ քաղաքներում այդ երեղյթը նկատված է այնպիսի ճշտութեամբ որ հարկադրուած պէտք է ընդունենք որ թէ խօլերայի և թէ տիֆի համաձարակումների առաջանալը կախուած է գետնի խոնաւութեան աստիճանից, թեպէտ պէտք է ասել որ այդ յարաբերութեան էութիւնը գեռ պարզ յայտնի չէ: Նմանապէս յայտնի է որ անթափանցիկ գետին ունեցող երկիրներում, տիֆի և խօլերայի համաձարակումները շեն պատահում: Անդիիայում արած չետազօտութիւնները հաստատում են որ, խօլերայի և տիֆի համաձարակումները սակաւ են լինում կամ թեթև, եթէ ընդհանրապէս գետինը մաքուր է պահում և նորա մէջ եղած ջրի բովանդակութիւնը որքան կարելի է պահպանում է շարժումից:

XIII.

Այժմ գառնալով ընդհատ տենդի վերայ պէտք է կրկնենք որ նա ևս գետնի խոնաւութեան հետ կապ ունի. ընդհատ տենդերը համարեայ միմիայն ճահճային երկրներում են գտնուում, ճահճները կարող են լինել ոչ թէ միայն

ցած տեղերում այլ և սարահարթներում, ուր հոսում են շրջակայ բարձրութեան վերնագետնի և ներքնագետնի ջրերը:

Ուրեմն ընդհատ տենդի առաջանալուն նպաստում է գործարանաւոր նիւթերով լի հողը, լինելով բարձր ջերմութեան միջոցին երբեմն չորութեան և երբեմն խոնաւութեան ազդեցութեան տակ, միանգամայն այդ տեսակ գետինը ամենայն ժամանակ ժամանուային թոյն (ալարիմիան^{*}) չի առաջացնում, այն երկիրներում ուր սովորաբար ընդհատ տեղական բնաւորութիւն է ստացել, նա երեսում է, ոչ թէ ամբողջ տարուայ միջոցին այլ շարունակաբար մի որոշ ժամանակում, և պէտք է ասել որ տարուայ եղանակները այնքան ազդեցութիւնն ուրաքանչում է նպաստում, որովհետեւ պյտ միջոցներում գետնի մէջ առաջանում են տենդի թոյնը զարգացնող պայմաններ:

Արևադարձի երկրներում ընդհատ տենդը կամ անձրւների ժամանակ կամ նորանից յետոյ է երեսում: Բարեխառն գոտույ հարաւային մասերում, ինչպէս օրինակ միջերկրական ծովի եղերավայր երկրներում, ընդհատ տենդը երեսում է մեծաւ մասամբ ամառվան և աշնան ամիսներում, աւելի երկիրականի է ջերմ և խոնաւ ամառը:

Շատ հանդամանքներ կան, որոնք հաստատում են թէ ընդհատ տենդի վարակիչ թոյնը, ինչպէս և միւս վարակիչ հիւանդութեանց յատկանիշ թոյնները, մարդոյ կազմուածքի մէջ թոքերով է ներս մտնում, (շնչառութեան միջոցին) թէպետ ասում են իրը տենդային թոյնը խմելու ջրի հետ ևս աղիքների միջոցաւ է ընդունում, բայց շատ կասկածելի է, զիսաւորապէս նորա համար որ աղիքների մարմնակազմութեան պայմանները աւելի անյարմար են հիւանդաբեր թոյնը ընդունելու համար, քան թէ թոքերի մէջ եղած պայմանները բացի դորանից հաստատուած է, որ ընդհատ տենդով կարելի է վարակուիլ տենդային տեղերից ջուր չխմելով անգամ. ինչ և իցէ այդ հարցը գեռ հետազոտութիւնների է կարօտ:

Ենհատի տրամադրութիւնը գէպի ընդհատ տենդը է միւս վարակիչ հիւանդութիւնների համեմատ: Դորանով պէտք է բացատրել որ տենդային թոյնը օդային հոսանքով մի կամ երկու աշխարհագրական մղոն հեռանալով իւր ծագման տեղից, շատ քիչ անգամ է հիւանդութիւն առաջացնում նոր տեղերում, որովհետեւ թոյնը իւր յատկութիւնը կորցնում է երկի շատ անօրացած լինելու պատճառաւ, միով բանիւ նոր տեղերում համաձարակ չի կարող երկալ բացի քանի մի մասնաւոր գէպքերից: Երկի թոյնի անօրանալու պատճառաւ տենդային տեղերում տան ներքի յարկի բնակիչները հիւանդանում են աւելի շատ, քան թէ տան վերին յարկի բնակիչները:

(*) Malaria. mal-aria. ժամանակակից թագավորութիւն:

Ճահճային երկրներում ընդհատ տեսնդը համաձարակ է երևում, որի սակաւ կամ յաճախ երևալը կախումն ունի գլխաւորապէս ճահճաների ֆիզիկական պայմաններից: Երբեմն հիւանդութիւնը նուազում է կամ բոլորովին անյետանում է առժամանակ զրի սառելու միջոցին, երբ գործարանաւոր նեխման գործողութիւնը սահմանափակվում է. մի և նդյնը պատահում է սաստիկ չոք եղանակներին, երբ ճահճային մակերևոյթը առժամանակ ցամաքում է: Խսկ երբ ճահճային երկրներում տաք և խոնաւ եղանակներ են տիրապետում, գործարանաւոր նիւթերի նեխումը սաստկանում է և գորանով ընդհատ տենդերի թիւերը բազմանում են:

Տեսնդը միայն բնական ճահճային երկրներում չէ երևում, ամեն մի անգամ երբ մի և նյյն տեսնդ առաջացնող պայմանները պատահում են, կարողանում են տեսնդային հիւանդութիւն առաջացնել: Յայտնի է որ անմշակ գետինը արօրադրելու և կամ փորելու ժամանակ, մեծ խորութիւնից գուրս ածած հողը լինելով օդի և անձրեկի ազդեցութեան տակ տեսնդային հիւանդութիւն է առաջացնում, որով հիւանդանում են բացի այդ գործով պարապօղ մշակներից նմանապէս և շրջակայ բնակիչները. զարարեցնելով այդ տեսակ աշխատութիւնները տեսնդերը ևս անյետանում են: Տեսնդային տկարութեանց դէմ առողջապահական միջոցներ գործ դնելու մասին ցածը կխօսենք:

Վարակիչ միազմատիկական հիւանդութիւնների ներկայեացուցիչները թէ տարածման և թէ ծագման կողմանէ միմեանց շատ նման են, վասն որպէս և նոցա յատկութիւնները միասին հիւանդեալ դրութիւններով կապատմէնք. Այդ հիւանդութիւնները կազողական չեն, հիւանդից առողջերին ուղղակի չեն փոխազդում:

Բ.) Նոքա արտաքին պատահական հանգամանքներից չեն առաջանում օրինակ ցրտահարութիւնից, վատ կերակրից, փտած նիւթերի կամ արտաքնոցների օքը ներշնչելուց, վատ զուր գործածելուց և այլն, այլ նոքա առանց բացառութեան առաջանում են միմիայն յատկանիշ հիւանդաբեր թոյնից — սկզբունքից:

Գ.) Նոցա զարգացման և տարածման համար անշուշտ տեղական պայմաններ են հարկաւոր: Այդ հիւանդութիւնների յատկանիշ թոյները եթէ որ և իցէ կերպով տեղափոխաւումն նոր տեղեր. ոչ մի ժամանակ վարակման կերպով չեն առաջացնում եթէ տեղական պայմանները չեն նպաստում նոցա վերանորոգման:

Դ.) Այդ հիւանդութիւնները տարածւում են մարդիկների հաղորդակցութեան միջոցով. թէ առողջները, թէ հիւանդները և թէ մինչեւ անգամ անշունչ առարկաները կարող են տեղափոխել հիւանդութեանց յատկանիշ թոյնը նոյն խսկ հիւանդութիւնից տակաւին ազատ եղած տեղերում:

Ե.) Հիւանդաբեր գործակալը (թօյնը) թոքերով է ներս մտնում մարդու կաղմուածքի մէջ և ոչ թէ ընդունում է ըմպելի ջրով ստաբմոսի միջոցով:

ԽIV.

Այժմ շատ քիչերն են համոզուած որ իւլիսն, բենդը բանականը, և բրուշնառիքը (բրուշի տիք, աղիքների տիք, վարցաւ), տարածւում են հպաւորութեան միջոցով, մի անհատից միւս փոխադրուելով: Եւ եթէ մի քանի բժիշկներ և մասամբ հասարակութիւնը ընդունում են օրինակի համար, որովայնայ տիքի կազողական (փոխադրական) յատկութիւնը, շատ սխալվում են նոքա և գլխաւորապէս այն պատճառաւ որ նոքա մինչեւ այժմ խառնում են երկու միմիանցից շատ տարբեր հիւանդութիւններ, նոքա չեն կարողանում ներկայացնել որ որովայնայ տիքի և բնաւոր տիքի յատկութիւնների մէջ մեծ զանազանութիւն կայ, որ աւելի երևումէ նոցա վարակիչ ընդունակութեան մէջ:

Նախընթաց յօդուածներում մենք բացատրեցինք որ բծաւոր տիքը, կազողական հիւանդութիւններից ամենավարակիչն է և նա մի անգամ յայտնուելով բնակիչներով լի տներում կամ սենեակներում մեծ վնասներ է տալիս. այն հիւանդանոցներում ուր գտնում են բծաւոր տիքով վարակուած հիւանդեր, շատ անգամ վարակուում են և հիւանդապահները, վիրակապները, բժիշկները, և որոնք յարաբերութիւն ունին հիւանդների հետ: Մենք մի և նյյն հետեանքները չենք նկատում որովայնատիքի ժամանակ, որովայնատիքով հիւանդների հետ կարելի է միշտ յարաբերութիւն ունենալ առանց որ և իցէ վարակուելու երկիւղով և կարելի է միայն վարակուել այնքան յաճախութեամբ, որքան և միւս անհատները, որոնք բոլորովին հիւանդների երեսն անգամ չեն տեսնում: Լիբերմեյսեն բատմում է որ շատ հիւանդանոցներում բժշկի պաշտօն կատարելիս, բը պատմում է որ շատ հիւանդանոցներում բժշկի հիւանդների հետ նա ոչ մի ժամանակ չի տեսել որ որովայնատիքով հիւանդների հետ յարաբերութիւն ունեցողները — բժիշկները, հիւանդապահները, վիրակարաւութիւնների կարող է պատահել որ մի որ և իցէ հիւանդանուտներից, յիրաւի կարող է պատահել որ մի որ և իցէ հիւանդանուտներից առաջ ցաւում, որովայնատիքով հիւանդապահների թիւը սովորականից աւելից կլինի, բայց այդ հանգամանքը չի հաստատում թէ որովայնայտիքի թոյնից հիւանդներից առողջներին և փոխուում այլ այդ ցոյց է տալիս որ այս թոյնը հիւանդներից առողջներին է փոխուում այլ այդ ցոյց է տալիս որ այս կամ այն հիւանդանոցը վարակման կենդրոն է գարձել ինչպէս և երբեմն մասնաւոր բնակարանները ևս գառնում են. այսինքն որովայնայտիքի թոյնը տեղական պայմանների մէջ գտել է բոլոր այն գործակալները, որոնք թոյնը տեղական պայմանների մէջ գտել է բոլոր այն գործակալները, որոնք թոյնը պատմում են թոյնի վերանորոգման և զարգացմանը, և թոյնի այդպէս չլինապատմում:

նէր, և թէ որովայնատիփը ուղղակի փոխադրուէր հիւանդներից բժիշկներին, հիւանդապահներին և հիւանդանոցի այլ պաշտօնեաներին, այն ժամանակ դոցա որովայնատիփով հիւանդանալը բացառութիւն չէր լինիլ, ինչպէս որ միշտ նկատվում է, այլ իւրաքանչիւր որովանատիփի համաձարակման ժամանակ մի և նոյն հետեանքները պիտի երկային, ինչ որ երկում են և բծաւոր տիֆի համաձարակման ժամանակ։

Խօլերայի մասին մի և նոյնը կարելի է ասել. յայտնի է որ խօլերային հիւանդանոցներում, ուր մեծաւ բազմութեամբ հիւանդներ են եղել հաւաքուած, հիւանդանոցի պաշտօնեաները վարակման չէին ենթարկվում; նմանապէս յայտնի է որ Լօնդոնի հիւանդանոցներում, խօլերայի տարածումն բոլորովին կախուած չէր հիւանդների թէ առանձին և թէ ընդհանուր սենեակներում տեղաւորուելուց. Մոսկվայում 1830—31 թուերի խօլերայի համաձարակման ժամանակ հիւանդանոցների 165 ծառայողներից ոչ մինը չմեռան։ Շատ դիտողութիւններ նմանապէս հաստատում են որ խօլերայի թոյնը կազմուական (փոխադրական) չէ։ Հիւանդանոցի պաշտօնեաները այն ժամանակ կարող են հիւանդութեան ենթարկուիլ, երբ հիւանդանոցը վարակման բոյն—կենդրոն է դառնում, ուրեմն երբ տեղական պայմանները թոյնի վերանորգմանը նպաստում են։

Դեղին տենդը նմանապէս փոխադրաբար չէ տարածուում հիւանդից առողջին. շատ տեղեկութիւններ կան, որոնք ապացուցանումն թէ դեղին տենդով բռնուած հիւանդների հետ հաղորդակցութիւն ունեցողները չեն վնասուում։

Բոլոր հանգամանքները ևս հաստատում են, որ ժանտախտի թոյնը նըմանապէս փոխադրական չէ, ժանտախտով հիւանդների հետ յարաբերութիւն ունեցող բժշկները, վերաբոյմները և այլն. . . չեն վնասուում, և կամ վնասուում են այնքան որքան և յարաբերութիւն չունեցողները, մինչև անգամ ասում են որ այս վերջիները աւելի են վնասուում քան թէ առաջիները։

Բժշկները շատ անգամ իւրեանց հետազոտութիւնների մեջ պատմում են որ թէ ժանտախտով հիւանդների և թէ մեռեալների յետ յարաբերութիւն ունեցող բժշկները և քահանաները ևն վարակում են վարակում։

XX.

Բժշկներից շատերը այժմ համոզուած են որ վերայշեալ մեռարեւէտան հետառունենաւը առաջանաւ էն միմայն նոյն յատկանիշ նոյների աղբեցունենաւ։

Թէպէտ կարծիք է տարածուած իրը որովայնատիփը և խօլերան կարող են առաջանալ արտաքնոցների և կոյուղիների գաղերի ներշնչումից, բայց պէտք է հաստատ պատասխանել, որ ոչ ցրտահարութիւնը, ոչ արտաքնոցի գաղերի ներշնչելը, ոչ խակ պառակ գործածելը ոչ երբէք չեն կարող ու-

րովայնատիփ կամ խօլերայ առաջացնել, գոցա ծագման համար հարկաւոր է անշուշտ որ կազմուածքի (մարգու) մեջ այդ հիւանդութիւնների յատկանիշ թոյն ընդունուի, և եթէ մի որ և իցէ տեղ երկում են այդ հիւանդութիւնները, պէտք է անկասկած ընդունել որ համաձարակումը տարածուել է ապրանքների և այլ առարկաների հետ բերուած վերջիշեալ հիւանդութեանց յատկանիշ թոյներից։ Ամենօրեայ դիտողութիւնները հաստատում են այդ կարծիքը։

Շատ տներ կարելի է օրինակ բերել, ուր արտաքնոցների գազանման կեղտոտութիւնները ներգործում են բոլոր բնակարաններում, իսկ որովայնատիփ կամ խօլերայ նոցա բնակիչների մեջ նկատուած չէ։ Նմանապէս շատ քաղաքներ և դիւղեր անմաքուր են պահում, կամ կեղտոտութիւնները նոցանից բաւականչափ չեն հետացւում և մի և նոյն ժամանակ ազատ են մնում համաձարակումներից. միով բանիւ թէ բնակարանների թէ փողոցների մաքրութեան աստիճանի և թէ տիֆի կամ խօլերայի յաճախ երկալու. մեջ հաւասարաչափ չեն հետացւում և մի և նոյն ժամանակ ազատ են մնում համաձարակումներից. միով բանիւ թէ բնակարանների թէ փողոցների մաքրութեան աստիճանի և թէ տիֆի կամ խօլերայի յաճախ երկալու. մեջ հաւասարաչափ յարաբերութիւն չկայ։ Պատահում է որ ամենակեղտոտ քաղաքներն և գիւղերը ազատուում են համաձարակումներից, իսկ ընդհակառակը համեմատաբար մաքուր պահպանուած քաղաքները և կամ գիւղերը ենթարկուում են համաձարակման ազդեցութեանը։ Կարելի է յիշել շատ գիւղեր, ուր բնակարանների տակ եղած գետինը լցուած է գործարանաւոր, լուծուելու ընդունակ նիւթերով։ բայց ոչ մի ժամանակ որովայնատիփ այդ տեղերում չի նկատուել։

Բոլոր արժանահաւատ հետազոտութիւնները հաստատում են, որ որովայնատիփը, խօլերան, գիւղին տենդն և ժանտախտը չեն յայտնուում ոչ մի տեղ, մինչեւ որ նոցա յատկանիշ թոյները մի որ և իցէ կերպով ներս չեն բերուում այդ հիւանդութիւններից տակաւին ազատ գտնւող տեղերուում։

Ուրեմն պէտք է ընդունել որ այդ հիւանդութիւնները երևաւուն են մայն այն գանձեաւում և այն ժամանակ, ուր և երբ հիւանդութերը յարդիկնի նոյներն են ներդիշուած։

XVI.

Վերջիշեալ վարակիչ հիւանդութիւնների ծագման, և համաձարակ տարածման համար բաւական չէ միայն նոցա յատկանիշ թոյների ազդեցութիւնը, որովհետեւ հիւանդի մարմննը պատրաստ թոյն դուրս չի հանում, այլ տալիս է մի (գեռ անյայտ) գործակալ նորա վերայ նորոգման համար, միան գործակալը ինչպէս մի քանի անգամ յիշելնեք. պէտք է ընդունել որ գետնի դրութիւննից է կախուած, վասն որպէս հիւանդութեան համաձարակումները կարող են տարածուել միայն այն տեղերուում ուր գտնուում են թոյնի վերանորգման պայմաններ։ Եթէ չկան այդ պայմանները այն ժամանակ ներս բերուած պատրաստ թոյնը անգամ կարող է մի քանի մասնաւոր հիւանդութեան դեպքեր առաջացնել, մինչեւ կարող է մի քանի մասնաւոր հիւանդութեան դեպքեր առաջացնել, և կամ կարող է որ հիւանդութիւն զարթուցանող պաշարը նուազի, և կամ կարող է

պատահել որ ներս բերուած հիւանդութեան փոքր քանակութեամբ թոյնը մի կամ երկու դէպք հիւանդութեան առաջացնէ և կամ բոլորովին առանց չետեանքի մնայ:

Ուրեմն իւրաքանչիւր մի տեղ չի նպաստում վերսիշեալ հիւանդութիւնների թոյների վերանորոգման և տարածման համար: Խօլերան և ժանտախտը համաձարակ տարածուում են միայն քանի մի քաղաքներում, իսկ միւս տեղերում բոլորովին չեն երևում, չնայելով որ նոցա յատկանիշ թոյները պիտի որ անկասկած ներգործած լինին: Մի և նոյնը պատահում է որովայնատիֆի և գեղին տենդի համաձարակման ժամանակ, մինչև անգամ այն տեղերում ուր նոքա տեղական են (Թումանչեան): թէ քաղաքում և թէ գիւղում վարակման առանձին բոյներ են կազմում, որով հիւանդութիւնը աւելի նշանաւոր փողոցներում և կամ առանձին տներումն է ներգործում, իսկ նոցա հարեւան տեղերը վարակումից ինայւում են: Այս տեղ կարելի է յիշել այն փաստը, որ Ելրոպայում շատ քաղաքներ և գիւղեր կան, ուր խօլերան գեռ ոչ մի ժամանակ համաձարակ չի երևացել, չնայելով որ այդ տեղերում շատ անգամ խօլերայի թոյն է ներս բերուած եղել: Աւելի զարմանալի օրինակ կարելի է յիշել Լիօն քաղաքը, որ մինչև ցայդմ խօլերային անընդունակ է եղել, մինչև անգամ երբ Փարիզ և Մարսիլիա քաղաքները ենթարկուած լինելով այդ հիւանդութեան, շատ գաղթականներ են ուղարկել Լիօն, որոնք ի հարկէ կարող էին իւրեանց հետ տանել խօլերայի թոյնը մեծ քանակութեամբ: Պետերբուրգում խօլերայի համաձարակումների միջցին, երբէք չէ նկատուել որ հիւանդութիւնը կարողանար համաձարակ տարածուել նորա շրջակայքում գտնուած 8արսկօէ Սէլօ անոււանուած տեղում, չնայելով որ այդ երկու քաղաքների մէջ եղած յարաբերութիւնները համաձարակման ժամանակ ևս շարունակուել են:

Բժշկական գրականութեան մէջ կան օրինակներ, որոնք՝ հաստատում են որ թէ տիֆը և թէ խօլերան կենդրոնանում են մինչև անգամ քաղաքի նըշանաւոր տներում, իսկ քաղաքի միւս մասերը կամ բոլորովին ազատ են մնում: և կամ շատ թեմեւ են հարուածում: բացի գորանից հետեւալ համաձարակումների ժամանակ մի և նոյն տները և փողոցները են զոհւում: Լեբէրդ ասում է որ 1847-թ. Փարիզի Սայլզետրիէր անոււանուած շենքում (հիւանդ ճեր կանանց համար) այնպէս սաստիկ տեղական խօլերայի համաձարակումն կար, որ այդ շինութեան 5000 բնակիչներից մօտ 1200 հիւանդացան: Նմանապէս երևեցաւ որ խօլերայի համաձարակումները կարող են յայտնուել մինչև անգամ մեծ շինութիւնների առանձին մասերում կամ սենեակներում: այնպէս որ մի և նոյն տան մի և նոյն գործով պարապող, և ընդհանրապէս մի և նոյն պայմանների, մէջ գտնուողընակիչները համաձարակումն ժամանակ տարբեր բաղտ ունեն հիւանդանութեան առանձին մասերի համար: Իբրև զարմանալի օրինակ կարելի է այստեղ յիշել 1873 թ. խօլերայի համաձարակման ժամանակ եղած երկույթը և առութեան բանտում

(Քավարիսյում): ուր չնայելով որ բոլոր բանտարկեալները մի և նոյն պայմանների մէջ էին, բանտի արևելեան մասում երկուշաբամվան միջցին խօլերան սաստիկ կատաղաբար էր ներգործում, իսկ բանտի միւս մասերը խօլերայից ազատ մնացին: Այս տեսակ օտարութի փաստերը աշքի առաջ ունենալով պիտի ընդունել, որ վարակված շինութիւններում կան նշանաւոր տեղեր, որոնք համաձարակումից ազատ են, ինչպէս և նկատված է որ վարակված փողոցներում գտնվում են չվարակված տներ, կամ վարակված երկիներում չվարակված տեղեր:

Միազմատիկական հիւանդութիւնների այս տեսակ օտարութի տարածման համար բաւական չէ պատճառ բերել կիմայական և մինոլորտական պայմանները որովհետեւ յայտնի է որ մի և նոյն կիմայում, մի և նոյն մինոլորտի ազգեցութեան ժամանակ, մի որ և իցէ փողոցների մի քանի տները, խօլերայի և որովայնատիֆի կենդրոն են զառնում, իսկ նոցա մերձակայ տները բոլորովին ազատ են մնում: Ճշմարիտ է որ կիմայական և մինոլորտական պայմանները անտարբեր չեն մնում խօլերայի գեղին տենդի, որովայնատիֆի են... տարածման եղանակների վերաբերութեամբ այս պատճառով է որ օրինակի համար Ելրոպայում խօլերայի համաձարակմունքը երևում են ամառվան վերշերին և աշնան, բայց զոքա չեն բացատրում, թէ ինչի մի քաղաքում սաստիկ խօլերայ է առաջանում: իսկ նորանից մի քանի մըզոն չեռաւորութեամբ քաղաքը ազատ է մնում խօլերայից և ինչի փողոցի մի տան մէջ հիւանդութիւնը սաստիկանում է, իսկ նորա գէմ յանդիման միւս տունը խնայվում:

Մենք վերը պատմեցինք *) թէ ինչ կապ կայ գետնի յատկութեան — առաւել ևս գետնի ծակոտկենութեան և խոնաւութեան — և տիփի կամ խօլերայի համաձարակմունքի երեկու մէջ: Դորանով պէտք է բացատրել վերին սատիճանի միազմատիկական հիւանդութիւնների տարածման օտարութի եղանակը: Ըատ հետազոտութիւններից երևում է որ վարակին միազմատիկական հիւանդութիւնների տարածվելուն նպաստում է աւելի ծակոտկեն և ջրի ու օգի համար գիւրաթափանց գետինը ինչպէս օրինակ շատ խիճ պարունակող ջրաբեր գետինը (բահօռալ ուշակ): իսկ ժայռութ գետնի վերայ կառուցված քաղաքները և գիւղերը ազատ են մնում միազմատիկական հիւանդութիւններից: Ուրեմն եթէ երկու մերձակայ տեղեր դանիլում են տարբեր գետնի վերայ զարմանք չէ որ նոցանից մէկում միազմատիկական հիւանդութիւնների թոյնըներս բերելուց յետոյ համաձարակումն է առաջանում, իսկ միւս մերձակայ տեղում համաձարակումը բոլորովին չեն երեւում և կամ երեւում է մի քանի գէպքերով: Մի և նոյնը պէտք է ասել քաղաքի և կամ շինութեան առանձին մասերի համար: Ըատ ան-

(*) Տես երես 26:

գամ պատահչում է որ աւելի փոքր տարածութեամբ գետնի յատկութիւնները ամենայն աեղ հաւասար չեն լինում, այնպէս որ թէ տների և թէ մեծ շինութիւնների առանձին մասերը կարող են կառուցված լինել այլ և այլ յատկութեամբ գետնի վրայ:

Ф-է տիվը և թէ խոլերան այն նմանութիւն ունին որ երկուսն ես գետնի յատկութիւններից են կախված. իսկ Եվրօպայի վերաբրութեամբ այդ երկու հիւանդութեան մէջ այն նշանաւոր զանազանութիւնը կայ, որ տիվը Եվրօպայի շատ մասերում պայմաններ է գտնում իւր անընդհատ գոյութեան համար, իսկ խոլերան մինչև ցայժմ գեռ չէ կարողացել արմատանալ ոչ Եվրօպայում և ոչ այլ աշխարհների մասերում բացի իւր հայրենիքից — արևելեան Հնդկաստանից: Մեր Երկիրներում խոլերային թղթնը մի ձըմեռվանից աւելի չէ կարողանում երկարել, որովհետեւ գետնի յատկութիւնները, մինչև անգամ ժամանակաւորապէս խոլերայից տրամադրված տեղերում այնպէս չեն որ կարողանան նպաստել խոլերայի թղյնի մշտական վերանորոգման: Այն հանգամանքը որ խոլերան բարձր տեղերում աւելի քիչ է երևում քան թէ գետային հովիտներում նմանապէս պէտք է վերաբերել գետնի յատկութիւններին: Կարծում էին թէ կայ մի որոշ բարձրութիւն, որի սահմանից խոլերան գուրս չէ անցնում, բայց այս կարծիքը հաստատելու բաւականաչափ փաստեր չկան, որովհետեւ կենդրոնական Ասիսում օրինակի համար կան այնպիսի տեղեր, որոնք ծովի մակերեսոյնից 2000—2500 մետր բարձրութիւն ունին, այսու ամենայնին խոլերան երևումն և այս տեղերում: Միջին Եվրօպայում առաւել ևս Ըլիցյարիայում և Գերմանիայում որքան յայտնի է խոլերան 800 մետր բարձրութենից չէ բարձրացել, այնպէս որ բարձր եղած տեղերը փոքր ի շատէ պահպանվել են նորանից: Անապատի գետնի չորսութիւնը խոլերայի թղյնի վերանորոգման չէ նպաստում, այդ պատճառով անապատային երկար ճանապարհորդութեան ժամանակ (մօտ երեք շաբաթ) խոլերան անհետանումէ: Խոլերան նմանապէս անհետանումէ ծովով երկար ճանապարհորդելու ժամանակ, թէև խոլերայով վարակված նաւահանգիստ ունեցող քաղաքների հետ հաղորդակայութեան նաւերի մէջ պատահումն հիւանդութիւններ, բայց սովորաբար հիւանդութիւնը հարուածումէ այն ճանապարհորդներին, որոնք ցամաք են գուրս գալիս, ուրեմն այնտեղ և վարակվում են: Իբրև բացառութիւն պատահումէ երբեմն, որ նաւերից գուրս չգնացողներն ևս հիւանդանումնեն խոլերայով ընդհանրապէս նաւերը խոլերայի թղյնի զարգացման կեղրոն չեն կարող դառնալ: Հիւանդութեան դէպքերը նմանապէս շատ քիչ են պատահում և այն նաւերում, որոնք խոլերայով վարակված նաւահանդիստ ունեցող քաղաքներից բնակիչներ են տեղափոխում:

XVII.

ոարկաների վերայ կարող է երկար ճանապարհորդութիւններ անել։ Հիւանդների կղկղանքները չեն պարունակում իւրեանց մէջ պատրաստ թոյն, ուրեմն և ուղղակի չեն կարող վարակել, միայն պէտք է ընդունել որ նոցա մէջ թոյն ծագելու սկզբունք կայ, որ գետնի գործակալների նպաստմամբ, խօլերայի թոյն է առաջանում։

XVIII

Վերսոյիշեալ միազմատիկական հիւանդութիւնների թղյները մարդի կազմ մուածքի մէջ թոքերով են ներս մանում և ոչ թէ ընդունվում ըմպելի ջրով։ Այս հարցի մասին բժիշկների մէջ սաստիկ վիճաբանութիւններ եղան, որոնք մինչև ցայժմ գեռ վերջնական վճիռ չեն ստացել։ Թէ ըմպելի ջուրը կարող է տիֆային և խօլերային հիւանդութիւնների միջնորդ լինել սա մասամբ միջնադրեան աւանդութենից է առաջացած, որ համաձարակմունքի տարածումը վերաբերում էր ջրհօրների թունաբորութեան, և մասամբ ևս այժմեան շատ հարեանցի արած հետազօտութիւններից, որով աշխատում են մի կապ գտնել տիֆային կամ խօլերային հիւանդութիւնների և խմելու ջրի գործածութեան մէջ, որի հետ մի կերպով (ջրհօրները արտաքնոցների մօտ լինելով, հիւանդների կըդկղանքները ջրի հետ խառնվելով և այլն) իրը թէ հիւանդաբեր թղյնը խառնվել է։ Հիւանդութեան ու ջրի գործածութեան մէջ եղած կապը հաստատ էին բնունում, եթէ հետազօտութեան միջոցին գտնում էին ջրի մէջ աւելի գործարանաւոր նիւթեր և կամ բորակաթմուատ և այլն։ և կամ եթէ կասկածելի ջրհօրը խափանելուց յետոյ համաձարակումը զարդարում էր։ Մի և նցյն ժամանակ մոռանում էին որ հիւանդների կղկղանքները բոլորովին չեն պարունակում պատրաստ տիֆային կամ խօլերային թղյն — որ պայդ հիւանդութիւնների համաձարակմունքը առաւել ևս սահման սպակեալ տեղերում կամ իբրև փողոցային և տնային համաձարակմունքը կարճ ժամանակ են տեսում — և թէ ջրի մէջ փոքր ինչ սովորականից աւելի գործարանաւոր նիւթերի կամ բորակաթմուատի ներկայութիւնը չեն կարող պալցցոց լինել որ հիւանդաբեր թղյնը նորա մէջ գտնվում է, և վերջապէս ուշազրութիւն չեն դարձնում գետնի յատկութիւնների վերայ և նմանապէս այն փաստի վերայ, որ ամենայն ժամանակ և ամենայն տեղ վարկվում են և այնպիսի անձներն, որոնք «կասկածելի ջուր» անդամ՝ գործ չեն դնում։ Այսպիսի թերակատար հետազօտութիւնները ոչ մի ժամանակ օրինաւոր հետևանքներ չեն կարող տալ և ճշմարիտ որ ամենայն տեղ, ուր վերաստուգված դիտողութիւններ են արած, երեացել է որ խօլերայի կամ տիֆի և ջրաբաշխութեան մէջ բոլորովին կապ չկայ, և եթէ մի որ և իցե տեղ նկատված է եղել այդ տեսակ երեակայական կապ, միշտ կարել էր լինում համաձարակման տարածումը այլ կերպ բացատրել, աւելի

Համապատասխան այդ հիւանդութիւնների յատկութիւնների վերայ ունեցած տեղեկութիւններին։ Միով բանիւ մինչև ցայժմ՝ ոչ մի գեղքում անկասկածիլ զիսնական ճշգութեամբ հաստատված չէ որ թէ տիֆլը և թէ խօլերան կարօղ են տարածվել ջրի միջոցով, և մինչև անգամ չկայ ոչ մի գեղք, որով շատ թէ քիչ հաւանական լիներ ընդունել հիւանդութեան այդ կերպ տարածումը։

Ուրեմն պէտք է ընդունենք որ օդն է միայն խօլերայի, տիֆի և ընդհան-
րապէս միազմատիկական հիւանդութիւնների վարակման միջնորդը, և ինչ-
պէս մէնք բացատրեցինք գետնի յատկութիւնների մէջ պէտք է գլու-
խնք միազմատիկական հիւանդութիւնների թոյների զարգացման նպաս-
տող գործակալներ, ուրեմն և գլխաւորապէս մէնք պէտք է երկիւղ կը-
րենք գետնի օղից, որն առաւել շատ է պարունակում իւր մէջ հիւանդա-
բեր գործակալներ։ Պետենչօֆէրը քանի մի անգամ ուշադրութիւն դարձ-
րեց գետնի օղի և մեր բնակարանների օղի մէջ եղած մշտական հաղորդակ-
ցութեան վերայ. մեր բնակարաններում առաւել ևս ձմեռ միջոցին միշտ
գետնի օղի հոսանքը բարձրանում և խառնվում է բնակարանների օղի
հետ և ոչ ոք չէ կասկածում որ ներքնասենեակների կամ մառանների օղը,
իւր բաղադրութեամբ համարեա նոյնանման է գետնի վերին շերտերի օղին,
և պէտք է ուրեմն այդ ճանապարհներով բնակարանները ընդունեն վա-
րակիչ միազմատիկական թոյները, բացի գորանից ամեն մի ծանրաշափա-
կան ճնշողութեան (барометрическое давление) ցածանալը պիտի որ գետնի
օղի հոսանքը գետնից վեր բնակարաններում աւելացնէ, և ճշմարիտ որ մի
քանի բժիշկների հեռազատութիւններից երկեցաւ որ տիֆային և խօլերա-
յին համաճարակմունքը ուղեկից են եղել ծանրաշափի սաստիկ ցածա-
նալուն և մինչեւ անդամ համաճարակման զօրութեան փոփոխութիւնը մե-
ծաւ մասամբ ուղեկցել է ծանրաշափական ճնշողութեան փոփոխութիւնը:

Ինչ որ կվերաբերվի անհատի տրամադրութեան դեպի միազմատիկա-
կան հիւանդութիւնները, նկատված է որ տիփով հիւանդանալու տրամա-
դրութիւնը աւելի մեծ է 15—20 տարեկան հասակում, տիփը մեծաւ մա-
սամբ հարուածում է առողջ և պնդակազմ անհատներին, իսկ խօլերան
թոյլ և նուազ մարդկիններին: Ցեղը կարծես թէ առանց ազդեցութեան չէ
մոռմ. Բրիգէնի 20 տարվան տեղեկագրական աղիւսակներից երեսում է
որ Հնդկաստանում խօլերայից մեռ ել են հազար եվրոպացիններից 54 հոգի,
իսկ տեղական ժողովրդից 4. այսինքն եվրոպացիններ մօտ 13 անդամ աւելի
են վնասվում քան թէ տեղական բնակիչները: Տեղական բնակիչներից
Սիպանները աւելի քիչ են տրամադրված վարակման, քան թէ միւս բնա-
կիչները — Հօրկասները, որոնք չնայելով որ միւնոյն պայմանների մէջ են
